ԵՓԵՍԱՑԻՆԵՐԻ 1

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ*

UBS[4]	NKJV	NRSV	TEV	NJB
Բարևներ	Ողջույններ	Բարևներ	Բարևներ	Հասցե և ողջույն
1:1-2	1:1-2	1:1-2	1:1ա	1:1-2
			1:1բ	
			1:2	
Քրիստոսի մեջ հոգևոր օրհնու-թյունները	Քրիստոսով փրկությունը	Գոհություն և օրհնություն	Քրիստոսի մեջ հոգևոր օրհնությունները	Աստծո փրկության ծրագիրը
1:3-14	1:3-14	1:3-14	1:3-6	1:3-14
			1:7-10	
			1:11-12	
			1:13-14	
Պողոսի աղոթքը	Աղոթք հոգևոր իմաստության համար		Պողոսի աղոթքը	Քրիստոսի հաղթա-նակը և գերազան-գությունը
1:15-23	1:15-23	1:15-23	1:15-23	1:15-23

*Չնայած որ դրանք ներշնչված չեն, պարբերությունների բաժանումները կարևոր են բնագրի հեղինակի մտադրությունը հասկանալու և դրան հետևելու համար: Ժամանակակից յուրաքանչյուր թարգմանություն բաժանել և ամփոփել է պարբերությունները: Յուրաքանչյուր պարբերություն ունի մի կենտրոնական թեմա, ճշմարտություն կամ գաղափար: Յուրաքանչյուր տարբերակ պարփակում է այդ թեման իրեն իսկ հատուկ՝ առանձնակի կերպով: Երբ կարդում եք տեքստը, հարցրե՛ք ինքներդ ձեզ, թե որ թարգմանությունն է համապատասխանում թեմայի և համարի բաժանման ձեր հասկացողությանը:
Յուրաքանչյուր գլխում մենք առաջինը պետք է կարդանք Աստվածաշունչը և փորձենք առանձնացնել դրա թեմաները (պարբերու-թյունները), ապա համեմատենք մեր հասկացածը ժամանակակից տարբերակների հետ: Մենք կարող ենք իրապես հասկանալ Աստվածաշունչը միայն այն դեպքում, երբ կհասկանանք բնագրի հեղինակի մտադրությունը՝ հետևելով նրա տրամաբանության ու ներկայացնելու ձևին: Միայն բնագրի հեղինակն է եղել ներշնչված. ընթերցողները իրավունք չունեն ուղերձը փոփոխելու կամ խմբագ-րելու: Աստվածաշնչի ընթերցողները պարտավոր են կիրառելու իրենց օրերի և կյանքերի համար այդ ներշնչված ճշմարտությունները: Ուշադրություն դարձրե՛ք, որ բոլոր տեխնիկական տերմիններն ու հապավումները մանրամասն բացատրվում են հետևյալ փաստաթղթերում՝ Հունարեն Քերականական Կազմությունների Համառոտ Սահմանումները, Տեքստային քննադատություն, և Բառարան:

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՑԻԿԼ («Սուրբ Գիրքը ճիշտ կարդալու ուղեցույց»)
ԸՍՏ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳՐԻ ՀԵՂԻՆԱԿԻ ՆՊԱՏԱԿԻ ՀԵՏՔԵՐՈՎ

Սա սերտողության ուղեցույց մեկնություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին: Դուք չպետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Մեկ անգամ նստելով կարդացեք ամբողջ գլուխը: Գտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունները ներշնչանքով չեն կատարված, սակայն դրանք կարևոր են բնագրի հեղինակի նպատակին հետևելու համար, որը հանդիսանում է մեկնաբանության սիրտը: Յուրաքանչյուր պարբերություն ունի միայն մեկ թեմա:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն
4. Եվ այլն

ԵՓԵՍԱՑԻՆԵՐԻ 1:1-23-Ի ՀԱՄԱՏԵՔՍՏԱՅԻՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ա. «Եփեսոսում» արտահայտությունը բաց է թողնված RSV, NJB և Williams թարգմանություններում, քանի որ այն բացակայում է մի քանի հին հունարեն ձեռագրերում (P^{46}, ℵ և B): Ըստ երևույթին այն մասում, որտեղ պետք է ներդրվեր տեղանունը, ազատ տեղ էր թողնված: Այս թուղթը Փոքր Ասիայի բոլոր եկեղեցիների համար շրջանառվող նամակ էր: Հայտնություն 2-3 գլուխներում յոթ եկեղեցիներին ուղղված նամակները ցույց են տալիս հին Հռոմեական փոստային երթուղին:

Բ. Երրորդությունը մեծարվում է Եփեսացիների 1:3-14-ում (ինչպես նաև Եփես. 1:17, 2:18, 3:14-17, 4:4-6-ում)
1. Հայրը հավիտենության մեջ, Եփես. 1:3-6 (Հոր սերը և նպատակի հենց Իր մեջ)
2. Որդին ժամանակի մեջ, Եփես. 1:7-12 (Հոր սերը և նպատակը Քրիստոսի մեջ)
3. Հոգին ապագայում, Եփես. 1:13-14 (Հոր սերը և նպատակը Հոգու մեջ)

3-14համարները ձևավորում են Երրորդության Աստծուն ուղղված փառաբանության աղոթք: Յուրաքանչյուր բաժինը փակվում է «ի գովություն Նրա փառքի» արտահայտությամբ (տես՝ Եփես. 1:6,12,14): Չնայած որ Երրորդության բոլոր երեք անձիք նշվում են, Հայր Աստվածն է շեշտադրված (ինչպես Եփես. 1:15-23-ում): Տե՛ս <u>Հատուկ Թեմա. Երրորդություն</u>, Եփես. 1:3-ում:

Գ. Ընտրությունը հրաշալի վարդապետություն է: Սակայն այն խտրականության կոչ չէ, այլ կոչ ուրիշների փրկության համար որպես անոթ, գործիք կամ միջոց լինելու: Հին Կտակարանում այս տերմինը գործածվում էր հիմնականում ծառայության համար. Նոր Կտակարանում այն գործածվում է հիմնականում փրկության համար, որի հետևանքը ծառայությունն է: Աստվածաշունչը երբեք էլ չի հաշտեցնում Աստծո ինքնիշխանության և մարդու ազատ կամքի միջև առկա թվացյալ հակասությունը, այլ հաստատում է երկուսն էլ: Սուրբգրային այդպիսի լարվածության մի գեղեցիկ օրինակ կարող է հանդիսանալ Հռոմեացիների 9-րդ գլուխը՝ Աստծո ինքնիշխան ընտրության վերաբերյալ և Հռոմեացիների 10-րդ գլուխը՝ մարդկության կողմից անհրաժեշտաբար տրվող պատասխանի վերաբերյալ (տես՝ Եփես. 10:9,11-13):

Աստվածաբանական այս լարվածության գլխավոր բանալին կարելի է գտնել Եփես. 1:4-ումԼ Հիսուսը Աստծո ընրյալ մարդն էր և բոլորը պոտենցիալ ընտրյալներ են Նրա մեջ (Կարլ Բարթ / Karl Barth): Հիսուսը Աստծո «այո»-ն է մեղավոր մարդկության կարիքին (Կարլ Բարթ): Եփեսացիների 1:4-ը նաև օգնում է հստակեցնել այս խնդիրը հաստատելով, որ նախասահմանության նպատակը երկինքը չէ, այլ սրբությունը (Քրիստոսակերպությունը): Մեզ հաճախ գրավում է ավետարանի օգուտները և անտեսում ենք պատասխանատվությունները: Աստծո կանչը (ընտրությունը) թե՛ ժամանակի և թե՛ հավիտենության համար է:

Վարդապետությունները առնչվում են այլ ճշմարտությունների հետ, որոնք միակը չեն, և նույն թեմայի մեջ են: Գեղեցիկ անալոգիա կարող է հանդիսանալ մի մեծ համաստեղությունը հակադրված մի աստղի հետ: Աստված ճշմարտությունը ներկայացնում է արևելյան, ոչ թե արևմտյան ժանրերում: Մենք չպետք է անտեսենք վարդապետական ճշմարտությունների բարբառային (պարադոքսալ) զույգերի կողմից հարուցված լարվածությունը (Օրինակ՝ Տրանսցենդենտ՝ մշատագո Աստված ի հակադրություն ներունակ Աստծո. Քրիստոնեական ազատությունը ի հակադրություն Քրիստոնեական պատասխանատվության՝ ուխտի զուգընկերոջ հանդեպ, և այլն):

«Ուխտի» աստվածաբանական հասկացությունը միավորում է Աստծո ինքնիշխանությունը (որը միշտ նախաձեռնողն է և օրակարգը կազմողը) մարդու կողմից պարտադիր սկզբնական և ապա շարունակելի զղջման հավատքով պատասխանի հետ: Զգույշ եղեք պարադոքսի միայն մեկ կողմը տեքստային ապացույց ներկայացնելուց և մյուս կողմը թերագնահատելուց: Զգույշ եղե՛ք միայն ձեր նախընտրելի վարդապետությունը կամ աստվածաբանության համակարգը պաշտպանելուց:

ԲԱՌԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ԵՓԵՍԱՑԻՆԵՐԻ 1:1-2
[1]Պողոսը՝ Աստծո կամքով Հիսուս Քրիստոսի առաքյալը, Եփեսոսում եղող սրբերին և Քրիստոս Հիսուսին հավատացողներին. [2]շնորհ և խաղաղություն ձեզ մեր Հայր Աստծուց և Տեր Հիսուս Քրիստոսից:

1:1 «Պողոս» Հունարեն «Պողոս» անունը նշանակում է «փոքր»: Մի քանի տեսություններ են եղել այս անվան ծագման հետ կապված:

1. Մականուն, որը բնութագրում է նր ֆիզիկական հասակը՝ երկրորդ դարի ավանդություն, որտեղ Պողոսի ֆիզիզկական տեսքը նկարագրված է որպես կարճահասակ, գիրուկ, ճաղատ, ծուռոտ, թավահոնք և դուրս պրծած աչքերով: Սա մեզ է հասել երկրորդ դարի ոչ կանոնական մի գրքից՝ Թեսաղոնիկեից, որը կոչվում է *Պողոսը և Թեկլան /Paul and Thekla/:*
2. Պողոսի անձնական հոգևոր գնահատականը հետևյալ հատվածներում՝ 1 Կորնթ. 15:9, Եփես. 3:8, 1 Տիմ. 1:15, որտեղ նա իրեն կոչում է «սրբերից ամենափոքրը» (հավանաբար այն պատճառով, որ հալածել էր Եկեղեցուն, Գործք 9:1-2): Ոմանք այս «փոքրության» գաղափարն են դիտարկում որպես իր կողմից ընտրված տիտղոսի բուն աղբյուրը: Սակայն, համաձայն Գաղատացիների գրքի, որտեղ նա մեծապես շեշտադրում է իր անկախությունը և հավասարությունը Երուսաղեմի Տասներկուսի հետ, այս կարծիքը անհավանական է դառնում (տես՝ Կորնթ. 15:10, 2 Կորնթ. 11:5, 12:11):
3. Ծնողներից. սփյուռքի շատ հրեաների (հրեաներ, որոնք ապրում էին Պողոստինից դուրս) ծծնդյան ժամանակ տրվում էր երկու անուն: Պողոսի եբրայերեն անունը Սողոս էր, իսկ իր հունարեն անունը՝ Պողոս:

❖ **«առաքյալ»** «Առաքյալ» տերմինը ծագել է հունարեն «ուղարկել» (*apostellō*) բայից: Տե՛ս Հատուկ Թեմա, Կող. 1:11-ում: Հիսուսն ընտրեց Իր աշակերտներից Տասներոկուսին, որպեսզի Իր հետ լինեն հատուկ նպատակով և նրանց անվանեց «Առաքյալներ» (տես՝ Ղուկ. 6:13): Այս տերմինը հաճախ կիրառվում էր Հիսուսի համար, որպես Հայր Աստծո կողմից ուղարկված (տես՝ Մատթ. 10:40, 15:24, Մարկ. 9:37, Ղուկ. 9:48, Հովհ. 4:34, 5:24,30,36,37,38, 7:29, 8:42, 10:36, 11:42, 17:3,8,18,21,23,25, 20:21): Հրեական աղբյուրներում այն կիրառվում էր մեկ ուրիշի համար որպես պաշտոնական ներկայացուցիչ ուղարկված մարդու համար, ինչպես «դեսպանը» (տես՝ 2 Կորնթ. 5:20):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՈՒՂԱՐԿԵԼ (*APOSTELLO*)
SPECIAL TOPIC: SEND (*APOSTELLO*)

Սա հասարակ հունարեն «ուղարկել» (այսինքն՝ *apostellō*) բառն է: Այս տեմինն ունի աստվածաբանական մի քանի կիրառություն՝

1. Դասական հունարենում, ինչպես նաև ռաբբիներն այն կիրառում էին այն մարդու համար, որը կանչված և ուղարկված է որպես մեկ ուրիշի պաշտոնական ներկայացուցիչը, մեր «դեսպան» բառի պես մի բան (տես՝ 2 Կորնթ.5:20):
2. Ավետարանները հաճախ այս ԲԱՅԸ օգտագործում են Հիսուսի համար, որպես Հորից ուղարկված: Հովհաննես Ավետարանում այս տերմինը մեսիական երանգ է ստանում (տես՝

Մատթ.10:40, 15:24, Մարկ.9:37, Ղուկ.9:48 և հատկապես Հովհ.5:36,38, 6:29,57, 7:29, 8:42, 10:36, 11:42, 17:3,8,18,21,23,25, 20:21 [թե՛ «առաքյալ» բառը և թե՛ դրա հոմանիշը՝ *pempō* կիրառվում են հ. 21-ում]): Այն կիրառվում է Հիսուսի կողմից հավատացյալներին ուղարկելու համար (տես՝ Հովհ. 17:18, 20:21):

3. ՆԿ-ը կիրառում է այս տերմինը աշակերտների համար՝
   ա. աշակերտների ներքին օղակի առաջին տասներկու առաքյալները (օր.՝ Մարկ.6:30, Ղուկ. 6:13, Գործք 1:2,26)
   բ. Առաքյալներին օգնող մարդկանց հատուկ խումբ կամ ծառայակիցներ՝
      (1) Բառնաբասը (տես՝ Գործք 14:4,14)
      (2) Անդրոնիկոսը և Հունիան (տես՝ Հռոմ.16:7)
      (3) Ապողոսը (տես՝ 1 Կորնթ.4:6-9)
      (4) Հակոբոսը՝ Հիսուսի կես եղբայրը (տես՝ Գաղ.1:19)
      (5) Սիվղանոսը և Տիմոթեոսը (տես՝ 1 Թեսաղ.2:6)
      (6) հավանական է Տիտոսը (տես՝ 2 Կորնթ.8:23)
      (7) հավանական է Եպափրոդիտոսը (տես՝ Փիլ.2:25)
   գ. եկեղեցում հարատևող՝ շարունակվող պարգև (տես՝ 1 Կորնթ.12:28-29, Եփես.4:11)
4. Պողոսն այս տերմինը կիրառում է իր նամակներից շատերում իր համար, որպես իրեն Աստծուց տրված Քրիստոսի ներկայացուցիչը լինելու իշխանության հաստատման կերպ (տես՝ Հռոմ.1:1, 1 Կորնթ.1:1, 2 Կորնթ.1:1, Գաղ.1:1, Եփես.1:1, Կող.1:1, 1 Տիմ.1:1, 2 Տիմ. 1:1, Տիտոս 1:1):
5. Որպես ժամանակակից հավատացյալներ, խնդիրը որի հետ բախվում ենք այն է, որ ՆԿ-ը երբեք չի սահմանում, թե ինչ է իր մեջ բովանդակում այս շարունակական պարգևը կամ ինչպես կարող ենք դա ճանաչել հավատացյալների մեջ: Ըստ երևույթին կարելի է զանազանել սկզբնական Տասներուսի (#3) և հետագա կիրառությունների (#3բ) միջև: Տե՛ս <u>ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՆԵՐՇՆՉԱՆՔ</u> և <u>ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԼՈՒՍԱՎՈՐՈՒՄ</u>: Եթե ժամանակակից «առաքյալները» ներշնչված չեն գրելու ավելի շատ Սուրբ Գիրք (այսինքն՝ կանոնը փակված է, տես՝ Հուդա հ.3, տե՛ս՝ <u>ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԿԱՆՈՆ</u>), ապա այն ինչ նրանք են անում տարբերվում է ՆԿ-յան մարգարեներից կամ ավետարանիչներից (տես՝ Եփես. 4:11): Իմ ներկայացրած հավանական տարբերակներն են՝
   ա. չավետարանված վայրերում միսիոներական եկեղեցիներ սկսողները (ինչպես կիրառվում է *Դիդարքում*)
   բ. հովիվների ավագներ տվյալ տարածաշրջանում կամ հարանվանության մեջ
   գ. ոչ ոք չգիտի

❖ **«Քրիստոս»** Սա եբրայերեն «*մեսիա*» (տես՝ Հատուկ Թեմա Կող.1:1-ում, տես՝ Դան.9:25-26, Հովհ.1:41, 4:25) տերմինի հունարեն համարժեքն է, որը նշանակում է «օծյալ» (տես՝ Մատթ.1:16): Սա հազվադեպ անուն է ՀԿ-ում, սակայն հատուկ Յահվեի կողմից կանչված և պատրաստված սպասվող փրկչի գաղափարը պարբերաբար կրկնվում է: Արքայական և քահանայական առանձնահատկությունները կարելի է տեսնել Սաղմ.11:1,4 և Զաք.4:11-14-ում: Այն նշանակում է «մեկը, որ կանչված և սպառազինված է Աստծո կողմից հատուկ առաջադրանքի համար»: ՀԿ-ում առաջնորդների երեք խմբեր՝ քահանաները, թագավորները և մարգարեները օծվում էին: Հիսուսը կատարում է այս բոլոր երեք օծյալ խմբերի պաշտոնները (տես՝ Եբր.1:2-3):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՀԿ-ՅԱՆ ՏԻՏՂՈՍՆԵՐ ՀԱՏՈՒԿ ԵԿՈՂԻ ՀԱՄԱՐ
SPECIAL TOPIC: OT TITLES FOR THE SPECIAL COMING ONE

Ա. Մարգարե՝ 2 Օրինաց 18:15, 18
Բ. Թագավոր

1. Հուդայի ցեղից՝ Ծնն. 49:10, Սաղմ. 60:7, 108:8
2. Դավիթի տնից՝ 2 Թագ. 7 (Հեսսեյից, Եսայի 11:1)
3. այլ տեքստերից՝ 1 Թագ. 2:10, Սաղմ. 89:3-4, Եսայի 9, 11, Երեմ. 30:8-9, Եզեկ. 7:21-22, Զաք. 9:9-10

Գ. Թագավոր, քահանա
1. Սաղմոս 110 (թագավոր՝ հհ. 1-3, քահանա՝ հ. 4)
2. Զաքարիա 4:14 (երկու ձիթենիները, երկու օծյալները, Զորաբաբելը /Դավթի ցեղը/ և Հեսուն /Ահարոնի ցեղը/)

Դ. Օծյալ (տես՝ Հատուկ Թեմա. Մեսիա)
1. Աստծո օծյալ Թագավորը՝ Սաղմ. 2:2, 45:7
2. Հոգու ներկայությունը՝ Եսայի 11:2, 61:1
3. Սպասված եկողը՝ Դանիել 9:26
4. ՀԿ-յան երեք առաջնորդներն էին օծվում, որպես Աստծո կողմից կանչված և լիազորված լինելու նշան՝ թագավորները (տես՝ Դատ. 9:8, 15, 1 Թագ. 2:10, 9:16, 24:10, 2 Թագ. 19:21, 23:1, Սաղմ. 18:50), քահանաները (տես՝ Ելից 28:41, Ղևտ. 4:3, 6:22) և մարգարեները (տես՝ 3 Թագ. 19:16):

Ե. Թագավորի Որդի
1. Սաղմ. 2:7, 12
2. Իսրայելի թագավոր՝ որպես Աստծո արքայությանը խորհուրդ (1 Թագավորաց 8)

Զ. Մարդու Որդի (Դան. 7:13, տես՝ Հատուկ Թեմա. Մարդու Որդի)
1. մարդկային էությունը՝ Սաղմ. 8:4, Եզեկ. 2:1
2. աստվածային էությունը՝ Դան. 7:13

Է. Փրկության հետ կապված հատուկ տիտղոսներ
1. Չարչարվող Ծառա՝ Ես. 52:13-53:12
2. Չարչարվող Հովիվ՝ Զաք. 12-14
3. Անկյունաքար՝ Սաղմ. 118, Ես. 8:14-15, 28:16 (տես՝ Հատուկ Թեմա. Անկյունաքար)
4. Հատուկ Մանուկ՝ Ես. 7:14, 9:6-7, Միքիա 5:2
5. Ընձյուղ՝ Ես. 4:2, 11:5, 53:2, Երեմ. 23:5-6, 33:15, Զաք. 3:8, 6:12 (տես՝ Հատուկ Թեմա. Հիսուսը Նազարեթից)

ՆԿ-ը վերցնում է բոլոր այս ցիրուցան համարները փրկության համար Աստծո գործակալի՝ իրագործողի վերաբերյալ և դրանք հստակեցնելով, զարգացնելով վերածում որպես Աստծո կողմից Խոստացված Եկողի մասին գաղափարին (օրինակ՝ Մատթ. 16:13-20, Հովհ. 11:25-27): Մեսիայի երկու գալուստները միջոցներ են, որոնցով այս իրարից տարբերվող ֆունկցիաներն ու տիտղոսները միավորվում են (տես՝ Հատուկ Թեմա. Այս և գալիք դարաշրջանները):

Ավետարաններում Մարդու Որդու՝ որպես իշխանություն ունեցողի, ի հակադրություն Չարչարվող Ծառայի միջև տարբերությունների վերաբերյալ լավ քննարկման համար տե՛ս Ջորջ Ի. Լեդդի *Նոր Կտակարանի Աստվածաբանություն*, էջ՝ 149-158 (George E. Ladd, *A Theology of the New Testament*):

❖ **«Հիսուս»** Այս եբրայերեն՝ արամերեն անունը նշանակում է «ՅԱՀՎԵՆ փրկում է» կամ «ՅԱՀՎԵՆ փրկություն է բերում»: Այն հայտնվեց Հիսուսի ծնողներին մի հրեշտակի միջոցով (տես՝ Մատթ. 1:21): «Հիսուս» անունը ծագել է եբրայերենի փրկություն՝ *hosea*, և Աստծո ուխտի անվան՝ «ՅԱՀՎԵ» –ի նախնական հապավման միաձուլումից: Դա նույն եբրայերենի Հեսու անունն է: Տե՛ս Հատուկ Թեմա. Աստծո անունները, Կող. 1:3-ում:

❖ **«Աստծո կամքով»** Այս նույն ներածական արտահայտությունը կիրառվում է Կող. 1:1, 1 Կորնթ. 1:1, 2 Կորնթ. 1:1 և 2 Տիմ. 1:1-ում: Պողոսը համոզված էր, որ Աստված ընտրել էր իրեն Առաքյալ

լինելու: Այս կոչման հատուկ զգացողությունը սկսեց նրա մոտ, երբ Դամասկոսի ճանապարհին դարձի եկավ (տես՝ Գործք 9, 22, 26): Սա նաև իր առաքելական իշխանության հաստատման աստվածաբանական կերպն էր: Տե՛ս Հատուկ Թեմա Եփես. 1:9-ում:

❖ **«սուրբերին»** «Սուրբեր» (*hagioi*) խոսքը աստվածաբանորեն կապված է ՀԿ-յան «սուրբ» (*kadosh*) տերմինի հետ, որը նշանակում էր «Աստծուն ծառայելու համար զատված՝ առանձնացված» (տես՝ 1 Կորնթ. 1:2, 2 Կորնթ. 1:1, Հռոմ. 1:7, Փիլ. 1:1, Կող. 1:2): ՆԿ-ում այն ներկայանում է հոգնակի թվով, բացի մի համարից՝ Փիլիպեցիների 4:21, սակայն նույնիսկ այդտեղ այն կիրառվում է հավաքական իմաստով: Աստվածաշունչը հավաքական գիրք է: Փրկվել նշանակում է դառնալ ուխտի հավատքի համայնքի, հավատացյալների ընտանիքի մի մասնիկը: Տե՛ս Հատուկ Թեմա. Սուրբեր, Կող. 1:2-ում:

Աստծո ժողովուրդը սուրբ է Հիսուսի արդարության շնորհիվ (տես՝ Հռոմեացիների 4, 2 Կորնթ. 5:21): Աստծո կամքն է, որ նրանք սուրբ կյանք ապրեն (տես՝ Եփես. 1:4, 2:10, 4:1, 5:27, Կող. 1:22, 3:12, Մատթ. 5:48): Հավատացյալները թե՛ հռչակված են սուրբ (սրբագործումը դիրքի համաձայն) և թե՛ կանչված են սրբության կյանքի (կատարելագործվող սրբացում): Արդարացումը և սրբագործումը պետք է միասին հաստատվեն:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՍՐԲԱՑՈՒՄ
SPECIAL TOPIC: SANCTIFICATION

ՆԿ արձանագրում է, որ երբ մեղավորները ապաշխարությամբ և հավատքով դարձի են գալիս դեպի Հիսուսը, նրանք անմիջապես արդարացվում և սրբացվում՝ սրբվում են: Սա Քրիստոսի մեջ նրանց ունեցած նոր դիրքն է: Նրա արդարությունը վերագրվում է նրանց՝ հավատացյալներին (տես՝ Հռոմեացիներին 4): Նրանք հռչակվում են արդար և սուրբ (Աստծո դատական ակտը):

Սակայն ՆԿ-ը նաև հորդորում է հավատացյալներին սրբության կամ սրբացման կյանք ապրելու: Սա հանդիսանում է թե՛ աստվածաբանական դիրք Հիսուս Քրիստոսի ավարտած գործի մեջ և թե՛ կոչ մեր ամենօրյա կյանքում Քրիստոսի պես վերաբերմունք և ապրելակերպ ունենալու: Քանի որ փրկությունը ձրի պարգև է և ամեն բան արժեցող ապրելակերպ, այդպես էլ սրբացումը՝

Սկզբնական պատասխան	**Պրոգրեսիվ Քրիստոսակերպություն**
Գործք 20:32; 26:18	Հռոմեացիների 6:19
Հռոմեացիներ 15:16	2 Կորնթացիների 7:1
1 Կորնթացիների 1:2-3; 6:11	Եփեսացիների 1:4; 2:10
2 Թեսաղոնիկեցիների 2:13	1 Թեսաղոնիկեցիների 3:13; 4:3-4,7; 5:23
Եբրայեցիների 2:11; 10:10,14; 13:12	1 Տիմոթեոս 2:15
1 Պետրոս 1:2	2 Տիմոթեոս 2:21
	Եբրայեցիների 12:14
	1 Պետրոս 1:15-16

Փրկության նպատակը երկինքը չէ այն ժամանակ, երբ կմեռնենք, այլ հիմա Քրիստոսին նմանվելը (տես՝ Հռոմ. 8:28-30, 2 Կորնթ. 3:18, Գաղ. 4:19, Եփես. 1:4; 4:13, 1 Թեսաղ. 3:13, 4:3; 5:23; 2 Թեսաղ. 2:13, Տիտոս 2:14, 1 Պետ. 1:15), որպեսզի նրանք, որ տեսնում են մեր վկայությունը, կարողանան գալ դեպի Հիսուսը և երկինքն գնան մեր հետ միասին: Սրբացումը արդարացման պես պարգև է և ընտրություն:

NASB	**«որ Եփեսոսում եք»**
NKJV, NRSV	**«որ Եփեսոսում եք գտնվում»**
TEV	**«որ ապրում եք Եփեսոսում»**
NJB	**---բաց է թողնված---**

Այստեղ ձեռագրային խնդիր կա: Որոշ հնագույն հունարեն տեքստեր (P^{46}, $\aleph^{*}$, B^{*}, ինչպես նաև Տերտուղիանոսի և Որոգինեսի օգտագործած հունարեն տեքստը) բաց են թողնում «Եփեսոսում» խոսքը: Հերետիկոս Մարկիոնը Եփեսացիների թուղթը անվանում էր «Լավոդիկեցիներին ուղղված թուղթ»: Այդ արտահայտությունը հայտնվում է ունցիալ ձեռագրերում՝ $\aleph^{2}$, A, B^{2}, D, F և G: Այն նաև առկա է Վուլգատտայում, Սիրիակում, Կոպտիկում և Հայկական թարգմանություններում:

Եփես. 1:1-ի հունարեն քերականությունը կարող է հարմարեցնել որևէ տեղանուն: Հետևաբար, շատ հավանական է, որ տեղանվան մասը դիտավորյալ էր ազատ թողնվել, քանի որ այս նամակը շրջանառվող նամակ էր այլ եկեղեցիների համար էլ, և յուրաքանչյուր եկեղեցի իր քաղաքի անունն էր տեղադրում բաց թողնված տեղում, երբ այն բարձրաձայն ընթերցվում էր հանրային ծառայության ժամանակ: Եփեսոսում (տարածաշրջանում ամենամեծ եկեղեցին այնտեղ էր) շատ վաղ շրջանի մի դպիր լրացնում է բաց թողնված հատվածը:

❖ **«որ հավատարիմ եք /հավատացողներիդ/»** «Հավատք», «վստահել» և «հավատալ» բառերը, որոնք գործածվում են հայերենում, բոլորն էլ ունեն միևնույն հունարեն արմատը (*pistis*): Այս բառի սկզբնական ՀԿ-յան շեշտադրությունը Աստծո վստահելիության վրա է եղել, ոչ թե մարդկային պատասխանի անկեղծության կամ ոգևորության վրա: Հավատացյալները պետք է արձագանքեն, ընդունեն և վստահեն Նրա վստահելի բնավորությանը և հավիտենական խոստումներին: Բանալին մեր հավատքի առարկան է, ոչ թե դրա ուժգնությունը: Քրիստոնեությունը հավատք է Քրիստոսի վրա, ոչ թե հավատք հավատքի վրա: Քրիստոնեությունը սկզբնական զղջացող և հավատքի պատասխան է, որի հետևում է հավատարմության կյանքը: Աստվածաշնչյան հավատքը մարդկային որոշումների՝ ապաշխարության, հավատքի, հնազանդության և հարատևության մի շարք է:

Տե՛ս <u>Հատուկ Թեմա. Հավատք, հավատալ, վստահել</u>, Կող. 1:2-ում:

1:2 «շնորհ և խաղաղություն ձեզ» Սովորական հունարեն ողջույնի խոսքը ողջույն բառն էր (*charein*), «բարով տեսանք»: Պողոսը իրեն հատուկ ձևով սա փոխել է հնչեղությամբ կրկին այդ խոսքին շատ նման խոսքով, սակայն գործածելով Քրիստոնեական տերմին՝ *charis* կամ շնորհք: Շատերը ենթադրում են, որ Պողոսը միաձուլում էր հունարեն ողջույնի խոսքը եբրայերեն ողջույնի *shalom* խաղաղություն տերմինի հետ: Չնայած որ սա գրավիչ տեսություն է, ամեն դեպքում Պողոսին բնորոշ այս ներածական արտահայտության մեջ չափից ավելի իմաստ է դրվում դրանով (տես՝ Հռոմ. 1:7, 1 Կորնթ. 1:3, 2 Կորնթ. 1:2, Փիլ. 1:2, և Փիլիմոն 3): Աստվածաբանորեն, Աստծո շնորհքը միշտ նախորդում է մարդկային խաղաղությանը:

❖ **«Հայր»** Այս տերմինը չի գործածվում սեռական սերնդաբանության կամ ժամանակագրական հերթականության իմաստով, այլ ընտանեկան մտերմիկ փոխհարաբերության: Աստված ընտրել է ընտանեկան տերմիններ, որպեսզի Իրեն հայտնի մարդկությանը (օրինակ՝ Ովսեա 2-3 որպես կրքոտ, հավատարիմ սիրեցյալ; Ովսեա 11-ը՝ սիրող հայր կամ մայր): Տե՛ս <u>Հատուկ Թեմա. Հայր</u>, Կող. 1:2:

❖ **«Տեր»** Հունարեն «Տեր» (*kurios*) տերմինը կարող է կիրառվել ընդհանուր իմաստով կամ ձևավորված աստվածաբանական իմաստով: Այն կարող է նշանակել «պարոն», «տեր», «սեփականատեր», «ամուսին» (օրինակ՝ Հովհ. 4:11,15 և 9:36) կամ «լիարժեք աստվածամարդ» (օրինակ՝ Հովհ. 4:19 և 9:38): Այս տերմինի ՀԿ-յան (եբրայերեն, *adon*) կիրառությունը ծագել է հրեաների կողմից Աստծո ուխտի անունը՝ ՅԱՀՎԵՆ արտասանելու դժկամությունից (տես՝ Ելից 3:14, տես՝ <u>Հատուկ Թեմա. Աստծո անունները</u>, Կող. 1:3-ում): Նրանք վախենում էին խախտել այն Պատվիրանը, որն ասում է՝ «Քո Տեր Աստծո անունը դատարկ տեղը չհիշատակես» (տես՝ Ելից 20:7, 2 Օրինաց 5:11): Հետևաբար, նրանք մտածում էին, որ եթե չարտասանեն այդ անունը, ապա իրականում դատարկ տեղը չեն հիշատակի: Այսպիսով նրանք փոխարինեցին եբրայերեն *adon* բառը մեկ այլ բառով, որը հունարենի *kurios* (Տեր) տերմինի համարժեք իմաստն ունի: ՆԿ-յան հեղինակները գործածում էին այս տերմինը նկարագրելու Քրիստոսի կատարյալ աստվածությունը: «Հիսուսն է Տերը» արտահայտությունը վաղ եկեղեցու համար հավատքի հանրային դավանության և մկրտության բանաձև էր հանդիսանում (տես՝ Հռոմ. 10:9-13, 1 Կորնթ. 12:3, Փիլ. 2:11):

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ԵՓԵՍԱՑԻՆԵՐԻ 1:3-14

3Օրհնյալ լինի Աստված և մեր Տեր Հիսուս Քրիստոսի Հայրը, որ մեզ օրհնեց բոլոր հոգևոր օրհնություններով երկնային տեղերում՝ Քրիստոսով. 4ինչպես մեզ Նրա մեջ ընտրեց աշխարհի հիմնումից առաջ, որպեսզի մենք սիրով սուրբ և անարատ լինենք Նրա առջև. 5մեզ Իրեն որդեգրության նախասահմանելով Հիսուս Քրիստոսի ձեռքով՝ Իր կամքի բարի հաճությամբ, 6ի գոհություն Իր շնորհի գերազանցության, որով Նա մեզ ընդունելի դարձրեց Սիրելու մեջ: 7Ում մեջ մենք փրկություն ունենք Նրա արյամբ, մեղքերի թողություն, Նրա շնորհի ճոխության չափով, 8որ առատորեն տվեց մեզ ամբողջ իմաստությամբ ու հասկացողությամբ, 9մեզ հայտնելով Իր կամքի խորհուրդը, Իր հաճության համաձայն, որն Ինքը որոշել էր ժամանակների լրման տնօրինման համար, 10որ ամեն բան ի մի բերի Քրիստոսի մեջ, և՛ Երկնքում, և՛ երկրի վրա եղող ամեն բան, Նրա՛ մեջ. 11Ում մեջ մենք նույնպես ժառանգություն ստացանք, նախասահմանված լինելով ըստ Նրա նպատակի, Ով ամեն ինչ իրագործում է Իր կամքի խորհրդով. 12որպեսզի մենք, որ Քրիստոսին հուսացողներից առաջինը եղանք, Նրա փառքի գովեստը լինենք: 13Ում դուք էլ հուսացիք, երբ լսեցիք ճշմարտության խոսքը՝ ձեր փրկության ավետարանը, Ում հավատալուց հետո նույնպե՛ս խոստման Սուրբ Հոգով կնքվեցիք, 14Ով մեր ժառանգության գրավականն է, մինչև ծախու առնված սեփականության փրկագնումը՝ ի գովություն Նրա փառքի:

1:3 3-14 համարները հունարեն մի ամբողջական երկար նախադասություն է, որը շատ հատկանշական է այս գրքին (տես՝ Եփես. 1:3-14, 15-23, 2:1-10, 14-18, 19-22, 3:1-12, 14-19, 4:11-16, 6:13-20):

❖ **«Օրհնյալ լինի Աստված»** Հունարեն այս տերմինը՝ «eulogy» (*eulogō*) միշտ Աստծուն փառաբանելիս էր օգտագործվում: Այս տերմինը տարբերվում է երանելիների մեջ գործածվող «երանի» (*makanos*) տերմինից (տես՝ Մատթ. 5:1-9, 10-11): Հայրը ուղարկեց Որդուն և Սուրբ Հոգուն, որպեսզի հավատացյալներին Իր և միմյանց հետ փոխհարաբերության մեջ բերի:

Պողոսը իրեն հատուկ ձևով իր նամակները սկսում է այն ստացողների համար գոհության աղոթքով (տես՝ Եփես. 1:15-23), սակայն այստեղ՝ այս շրջանառվող նամակում, յուրահատուկ կերպով գրում է Երրորդությանն ուղղված մի ընդարձակ դոքսոլոգիա:

❖ **«որ մեզ օրհնեց... Քրիստոսով»** Օրհնյալ Աստված օրհնում է հավատացյալներին: Հավատացյալներն ընդունում են ամեն բան Քրիստոսի միջոցով: 3-14 համարները հունարենում մի նախադասություն է, որը ցույց է տալիս Երրորդության գործը՝ ժամանակից առաջ, ժամանակի մեջ, և ժամանակից դուրս: Ամեն դեպքում Հոր ծրագիրը՝ նպատակը մեծարվում է բոլոր երեք բաժիններում (տես՝ Եփես. 1:3-6, 7-12 և 13-14):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԵՐՐՈՐԴՈՒԹՅՈՒՆԸ
SPECIAL TOPIC: THE TRINITY

Ուշադրություն դարձրեք Երրորդության բոլոր երեք Անձերի գործունեությանը միավորված կոնտեքստներում: «Երրորդություն» տերմինը առաջին անգամ հնարել է Տերտուղիանոսը. այն աստվածաշնչյան բառ չէ, սակայն հասկացությունն ինքնին տարածված է:

Ա. Ավետարանները
1. Մատթ.3:16-17; 28:19 (և զուգահեռները)
1. Հովհ.14:26

Բ. Գործք Առաքելոց – Գործք 2:32-33, 38-39

Գ. Պողոսը
1. Հռոմ.1:4-5; 5:1,5; 8:1-4,8-10
2. 1 Կորն.2:8-10; 12:4-6
3. 2 Կորն.1:21-22; 13:14

4. Գաղ.4:4-6
5. Եփես.1:3-14,17; 2:18; 3:14-17; 4:4-6
6. 1 Թեսաղ.1:2-5
7. 2 Թեսաղ.2:13
8. Տիտ.3:4-6

Դ. Պետրոս – 1 Պետ.1:2

Ե. Հուդա – հհ. 20-21

Նաև ՀԿ-ում Աստված բառը ակնարկվում է հոգնակի թվով:

Ա. Աստված բառի ՀՈԳՆԱԿԻ թվով կիրառությունը
1. *Elohim* անունը ՀՈԳՆԱԿԻ է, սակայն երբ կիրառվում է Աստծո համար, ապա օգտագործվում է ԲԱՅԻ ԵԶԱԿԻ թիվը:
2. Ծննդոց 1:26-27; 3:22; 11:7-ում «Մեզ»/մեր/

Բ. Տիրոջ Հրեշտակը Աստվածության տեսանելի ներկայացուցիչն էր
1. Ծննդոց 16:7-13; 22:11-15; 31:11,13; 48:15-16
2. Ելից 3:2,4; 13:21; 14:19
3. Դատավորաց 2:1; 6:22-23; 13:3-22
4. Զաքարիա 3:1-2

Գ. Աստված և Իր Հոգին առանձին են, Ծնն.1:1-2; Սաղմ.104:30; Ես.63:9-11; Եզեկ.37:13-14

Դ. Աստված (YHWH) և Մեսիան (*Adon*) առանձին են, Սղմ.45:6-7; 110:1; Զաք.2:8-11; 10:9-12

Ե. Մեսիան և Հոգին առանձին են, Զաք.12:10

Զ. Բոլոր երեքն էլ նշվում են Եսայի 48:16; 61:1-ում

Հիսուսի աստվածությունը և Հոգու անձ լինելը վաղ շրջանի խիստ, միաստվածության հետևող հավատացյալներին խնդիրների առջև էր կանգնեցրել:

1. Տերտուղիանոսը ստորադասում էր Որդուն Հորից
2. Որոգինեսը ստորադասում էր Որդու և Հոգու աստվածային էությունը
3. Արիուսը ուրանում էր Որդու և Հոգու Աստվածությունը
4. Վանականություն/միապետականությունը՝ հավատում էր մեկ Աստծո՝ Հոր, Որդու և Սուրբ Հոգու հաջորդական ժամանակագրական դրսևորումներին

Երրորդությունը պատմականորեն զարգացող մի ձևակերպում է, որը ինֆորմացված է աստվածաշնչյան նյութերով:

1. Հիսուսի կատարյալ Աստվածությունը՝ հավասարազորև Հորը, հաստատվեց Նիկիական Խորհրդի կողմից, Ք.Հ.325 թ-ին (տես՝ Հովհ.1:1; Փիլ.2:6; Տիտ.2:13)
2. Հոգու կատարյալ Աստվածությունն ու անձնավորությունը՝ հավասարազոր Հորը, հաստատվեց Կոստանտնուպոլսի Խորհրդի կողմից, Ք.Հ.381 թ-ին
3. Երրորդության վարդապետությունը միանգամայն արտահայտվում է Օգոստինոսի *De Trinitate* աշխատության մեջ:

Իրականում այստեղ մի առեղծված կա: Սակայն ՆԿ-ը թվում է հաստատում է աստվածության էությունը երեք հավիտենական անձնավորությունների դրսևորմամբ:

NASB, NKJV, NRSV **«երկնային *տեղերում*»**
TEV **«երկնային աշխարհում»**
NJB **«երկնքի հոգևոր օրհնությունները»**

Այս տեղային (ոլորտի) չեզոք հոգնակի ածականը՝ «երկնային տեղերում» (*epouranious*) կիրառվել է միայն Եփեսացիներում (տես՝ Եփես.1:20, 2:6, 3:10, 6:12): Այս բառի բոլոր կիրառությունների համատեքստից ելնելով այն պետք է նշանակի հոգևոր տերություն, որում հավատացյալները ապրում են այստեղ՝ հիմա, ոչ թե երկնքում:

1:4 «Նա ընտրեց մեզ» Սա անորոշ կատարյալ չեզոք սեռի սահմանական եղանակ է, որը շեշտադրում է ենթակայի վճռական որոշումը՝ ընտրությունը: Այն հատուկ ուշադրություն է սևե-

ռում ժամանակից առաջ Հոր ընտրության վրա: Աստծո ընտրությունը չպետք է հասկանալ իսլամական վճռականության, ո՛չ էլ ուլտրակալվինիստական «Աստված ընտրում է մի քանիսին ի հակադրություն Աստված չի ընտրում մյուսներին» նշանակություններով, այլ ուխտի՝ պայմանագրի իմաստով: Աստված խոստացավ փրկել մեղավոր մարդկությանը (տես՝ Ծնն. 3:15): Աստված կանչեց և ընտրեց Աբրահամին՝ ընտրելով ամբողջ մարդկությանը (տես՝ Ծնն. 12:3, Ելից 19:5-6): Տե՛ս Հատուկ Թեմա. ՅԱՀՎԵի Հավիտենական Փրկության Ծրագիրը: Աստված Քրիստոսի մեջ կանչում է բոլորին (տես՝ Հովհ. 3:16, 1 Տիմ. 2:4, 2 Պետ. 3:9, 1 Հովհ. 2:2, 4:14): Աստված Ինքն է ընտրում յուրաքանչյուր մարդու, ով հավատք է դրսևորում Քրիստոսի հանդեպ: Հավատացյալների Քրիստոսին հավատալու ընտրությունը հաստատում է, ոչ թե որոշում, որ Աստված ընտրել է իրենց: Աստված փրկության հարցում միշտ նախաձեռնող է (տես՝ Հովհ. 6:44, 65): Այս տեքստը և Հռոմ. 8:28-30, 9:1-33 նախասահմանության վարդապետության համար հիմնական ՆԿ-յան տեքստերն են, որոնք շեշտադրվել են Օգոստինոսի և Կալվինի կողմից:

Աստված ընտրել է հավատացյալներին ոչ միայն փրկության (արդարացման) համար, այլ նաև սրբացման (տես՝ Կող. 1:12): Սա կարող է վերաբերել՝

1. Քրիստոսում մեր ունեցած դիրքին (տես՝ 2 Կորնթ. 5:21)
2. Աստծո փափագին՝ Իր որդիների կյանքում Իր բնավորության վերարտադրման համար (տես՝ Եփես. 2:10, Հռոմ. 8:28-29, Գաղ. 4:19, 1 Թեսաղ. 4:3):

Աստծո կամքը Իր որդիների համար թե՛ մի օր Երկինքն է, և թե՛ այսօր Քրիստոսին նմանվելը:

Այս խոսքի մեջ դերանունները երկիմաստ են: Դրանցից շատերը վերաբերում են Հայր Աստծուն: Այս ամբողջ հատվածը խոսում է Նրա սիրո, նպատակի և մեղավոր մարդկության փրկության ծրագրի մասին: Սակայն համատեքստում ակնհայտ է, որ Եփես. 1:7,9,13 և 14 համարներում դերանունները վերաբերում են Հիսուսին:

❖ **«Նրա մեջ»** Սա բանալի հանդիսացող հասկացություն է: Հոր օրհնությունները, շնորհքը և փրկությունը հոսում են միայն Քրիստոսի միջոցով (տես՝ Հովհ. 10:7-18, 14:6): Ուշադրություն դարձրեք այս քերականական կազմության կրկնություններին (տեղի պարագայով) Եփես. 1:3-ում՝ «Քրիստոսի մեջ», Եփես. 1:4-ում՝ «Նրա մեջ», Եփես. 1:7-ում՝ «Նրա մեջ», Եփես. 1:9-ում՝ «Նրա մեջ», Եփես. 1:10-ում՝ «Քրիստոսի մեջ», «Նրա մեջ», Եփես. 1:12-ում՝ «Քրիստոսի մեջ» և Եփես. 1:13-ում՝ «Նրա մեջ» (երկու անգամ): Սրանք զուգահեռներ են Եփես. 1:6-ում «Սիրելիի մեջ» խոսքին: Հիսուսը Աստծո «այո»-ն է մեղավոր մարդկությանը (Կարլ Բարթ): Հիսուսը ընտրյալն է, Ում մեջ բոլորն են պոտենցիալ ընտրյալներ (տես՝ Հովհ. 3:16): Հայր Աստծո բոլոր օրհնությունները հոսում են Քրիստոսի միջոցով:

❖ **«աշխարհի հիմնումից առաջ»** Այս արտահայտությունը նաև կիրառվում է Մատթ. 25:34, Հովհ. 17:24, 1 Պետ. 1:19-20 և Հայտն. 13:8-ում: Այն ցույց է տալիս Երրորդության Աստծո փրկության համար գործողությունները նույնիսկ նախքան Ծննդոց 1:1-ը: Տե՛ս Հատուկ Թեմա. Պողոսի *Kosmos* բառի կիրառությունը, Կող. 1:6-ում: Մարդիկ սահմանափակ են իրենց ժամանակի զգացողությամբ. մեր համար ամեն ինչ անցյալ է, ներկա կամ ապագա, բայց ո՛չ Աստծո համար: Նրա համար պատմությունը հավիտենական ներկա է:

❖ **«որպեսզի սուրբ և անարատ լինենք Նրա առջև»** Նախասահմանության նպատակը սրբությունն է, ոչ թե առանձնաշնորհումը: Աստծո կանչը Ադամի մի քանի ընտրյալ երեխաների համար չէր, այլ բոլորի: Այն կանչ է բոլորի համար լինելու այն, ինչ Աստված մտադիր էր մարդկության համար լինելու՝ Իր պես, այսինքն՝ Քրիստոսակերպությունը (տես՝ Հռոմ. 8:28-30, 2 Կորնթ. 3:18, Գաղ. 4:19, Եփես. 4:13, 1 Թեսաղ. 3:13, 4:3, 5:23, 2 Թեսաղ. 2:13, Տիտոս 2:14, 1 Պետ. 1:15), Իր պատկերի պես (տես՝ Ծնն. 1:26-27): Ողբերգություն է նախասահմանությունը սրբության կյանքի փոխարեն աստվածաբանական սկզբունքի վերածելը: Հաճախ մեր նախընտրելի համակարգված աստվածաբանություններն ավելի բարձր են խոսում, քան սուրբգրային տեքստերը:

«Անարատ» (*amōmos*) կամ «արատներից զուրկ» տերմինը կիրառվում է՝

1. Հիսուսի համար (տես՝ Եբր. 9:14, 1 Պետ. 1:19)
2. Զաքարիայի և Եղիսաբեթի համար (տես՝ Ղուկ. 1:6)
3. Պողոսի համար (տես՝ Փիլ. 3:6)
4. բոլոր ճշմարիտ Քրիստոնյաների համար (տես՝ Փիլ. 2:15, 1 Թեսաղ. 3:13, 5:23):

Տե՛ս Հատուկ Թեմա Կող. 1:22-ում:

Աստծո անդրդվելի կամքը յուրաքանչյուր հավատացյալի համար ոչ միայն ապագայում երկինքն է, այլ հիմա Քրիստոսին նմանվելը (տես՝ Հռոմ. 8:29-30, 2 Կորնթ. 3:18, Գաղ. 4:19, 1 Թեսաղ. 3:13, 4:3, 1 Պետ. 1:15): Հավատացյալները պետք է արտացոլեն Աստծո բնավորության գծերը այս մեղավոր՝ կորուսյալ աշխարհին, ավետարանչության նպատակով:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՍՈՒՐԲ
SPECIAL TOPIC: HOLY

I. Հին Կտակարան (նկարագրված է հիմնականում Եսայի գրքից)

Ա. *kadosh* տերմինի (BDB 872, KB 1072) ստուգաբանությունը անորոշ է, հնարավոր է, քանանական (այսինքն՝ Ուգարիթիկ): Հնարավոր է, որ արմատի մի մասը (այսինքն՝ *kd*) նշանակում է «բաժանել»: Սա հանրաճանաչ սահմանման աղբյուրն է՝ «առանձնացված Աստծո գործածության համար (քանանական մշակույթից, տես՝ 2 Օր. 7:6; 14:2,21; 26:19)»:

Բ. Այն վերաբերում է Աստծո ներկայությանը բաներում, վայրերում, ժամանակներում և մարդկանց մեջ: Այն չի հանդիպում Ծննդոցում, սակայն տարածված է Ելից, Ղևտացոց և Թվոց գրքերում:

Գ. Մարգարեական գրականության մեջ (հատկապես Եսայիա և Ովսիա) նախկինում եղել է անձնական տարր, բայց նախապես չի շեշտվում (տես՝ Հատուկ Թեմա. Սուրբը): Այն դառնում է Աստծո էությունը բնութագրելու ձև (տես Ես. 6:3): Աստված սուրբ է: Նրա բնավորությունը ներկայացնող անունը Սուրբ է: Նրա ժողովուրդը, ովքեր պետք է բացահայտեն Իր կերպարը մեղավոր աշխարհին, սուրբ են (եթե նրանք հնազանդվում են հավատքով ուխտին):

1. ԱԾԱԿԱՆ, BDB 872, קדוש «սուրբ» օգտագործվում է
   ա. Աստված, Ես. 5:16; 6: 3 (երեք անգամ), տես՝ Հատուկ Թեմա. Սուրբը
   բ. Նրա անունը, Ես. 40:25; 49:7; 57:15գ. Նրա բնակվելու տեղը, Ես. 57:15
   դ. Նրա Շաբաթը, Ես. 58:13
2. ԲԱՅ, BDB 872, קדש «առանձնացնել», «նվիրվել»
   ա. Աստծո բնավորությունը, Ես. 5:16; 29:23
   բ. Աստված, Ես. 8:13; 65: 5
   գ. Աստծո հրեշտակները, Ես. 13: 3
   դ. Աստծո անունը, Ես. 29:23
   ե. փառատոն, Ես. 30:29
   զ. Օծյալ, նվիրված մարդիկ, Ես. 66:17
3. ԳՈՅԱԿԱՆ, BDB 871, קדש, «առանձնացում», «սրբություն»,
   ա. սուրբ սերունդ, Ես. 6:13
   բ. սուրբ լեռ, Ես. 11:9; 27:13; 56:7; 57:13; 65: 11,25; 66:20
   գ. առանձնացնել, Ես. 23:18
   դ. սրբության ձև, Ես. 35: 8
   ե. սրբավայր, Ես. 43:28; 62:9; 64:11
   զ. սուրբ քաղաք, Ես. 48: 2; 52:1
   է. Սուրբը, Ես. 49: 7 (տես՝ Հատուկ Թեմա. Սուրբը)
   ը. սուրբ բազուկ, Ես. 52:10
   թ. Սուրբ օր, Ես. 58:13
   ժ. սուրբ ժողովուրդ, Ես. 62:12
   ի. Սուրբ Հոգի, 63: 10,11

 լ. Աստծո գահը, Ես. 63:15
խ. սուրբ վայր, Ես. 63:18
ծ. սուրբ քաղաքներ, Ես. 64:10

Դ. Աստծո ողորմությունը և սերը անբաժանելի են ուխտերի, արդարության և էական բնույթի աստվածաբանական գաղափարներից: Այստեղ է Աստծո լարվածությունը ոչ սուրբ, մեղավոր, ապստամբ մարդկության հանդեպ: Մի շատ հետաքրքիր հոդված կա կապված Աստծո ողորմության և սուրբ լինելու հետ, Robert B. Girdlestone, Synonyms of the Old Testament, էջ 112-113:

II. Նոր Կտակարան

Ա. Նոր Կտակարանի հեղինակները (բացի Ղուկասից) եղել են եբրայերեն մտածողներ, բայց գրել են Կոյնե հունարենով: Նոր Կտակարանի եկեղեցին օգտագործել է Հին Կտակարանի հունարեն թարգմանությունը՝ Սեպտուագինդը: Հին Կտակարանի հունարեն թարգմանությունն էր, ոչ թե դասական հունարեն գրականությունը, մտածողությունը կամ կրոնը, որը վերահսկում էր նրանց բառապաշարը:

Բ. Հիսուսը սուրբ է, քանի որ Նա Աստծուց է և Աստծո նման է (տես՝ Ղուկ. 1:35; 4:34; Գործք 3:14; 4: 27,30, Հայտ. 3: 7): Նա Սուրբ և Արդար է (տես՝ Գործք 3:14; 22:14): Հիսուսը սուրբ է, քանի որ Նա անմեղ է (տես՝ Հովհ. 8:46; 2 Կոր. 5:21; Եբր. 4:15; 7:26; 1 Պետ. 1:19; 2:22; 1 Հովհ. 3: 5):

Գ. Քանի որ Աստված սուրբ է (տես՝ Հովհ. 17:11, 1 Պետ. 1:15-16, Հայտ. 4: 8, 6:10), Նրա զավակները պետք է սուրբ լինեն (տես՝ Ղևտ.11:44-45, 19:2, 20:7,26, Մաթ. 5:48; 1 Պետ. 1:16): Քանի որ Հիսուսը սուրբ է, Նրա հետևորդները պետք է սուրբ լինեն (տես՝ Հռոմ. 8: 28-29; 2 Կոր. 3:18; Գաղ. 4:19; Եփես. 1: 4; 1 Թես. 3:13; 4: 3; 1 Պետ. 1:15): Քրիստոնյաները փրկվել են ծառայելու Քրիստոսի նմանությամբ (սրբությամբ):

❖ **«սիրով»** Քերականորեն այս արտահայտությունը կարող էր կապված լինել թե՛ 4-րդ և թե՛ 5-րդ համարի հետ: Սակայն, երբ այս արտահայտությունը կիրառվում է Եփեսացիների թղթում նաև այլ տեղերում, այն մշտապես նկատի է ունենում Աստծո հանդեպ մարդկային սերը (տես՝ Եփես. 3:17, 4:2,15, 16):

1:5

NASB	**«Նա նախասահմանեց մեզ»**
NKJV	**«մեզ նախասահմանելով»**
NRSV	**«Նա սահմանեց մեզ»**
TEV	**«Աստված արդեն ընտրել էր մեզ»**
NJB	**«նախապես մեզ իր համար նշանառեց»**

«Նա մեզ նախասահմանեց» արտահայտությունը ԱՆՈՐՈՇ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ԴԵՐԲԱՅ է: Այս հունարեն տերմինը բաղադրյալ կազմություն ունի՝ «նախքան» (*pro*) և «նշել» (*horizō*) բառերից: Այն վերաբերում է Աստծո կանխորոշված փրկագործության ծրագրին. տե՛ս՝ Հատուկ Թեմա. ՅԱՀՎԵԻ Հավիտենական Փրկության Ծրագիրը (տես՝ Ղուկ. 22:22, Գործք 2:23, 4:28, 17:31, Հռոմ. 8:29-30): Նախասահմանությունը մի քանի ճշմարտություններից մեկն է, որը կապ ունի մարդկության փրկության հետ: Այն իրար հետ կապված մի շարք աստվածաբանական ճշմարտությունների մաս է կազմում: Այն երբեք էլ նախատեսված չի եղել առանձնացվելու: Աստվածաշնչյան ճշմարտությունը տրվում է լարվածությամբ լի, պարադոքսալ զույգերի շարքերի տեսքով: Հարանվանությունների առաջացումը պատճառ հանդիսացավ շեշտադրելու այս դիալեկտիկ ճշմարտություններից միայն մեկը (նախասահմանությունը հակադրված մարդու ազատ կամքին, հավատացյալի երաշխիքը հակադրված սրբերի հարատևությանը, առաջին մեղքը հակադրված գիտակցված մեղքին, անմեղությունը հակադրված քիչ մեղանչելուն, անմիջապես հռչակված արդարացումը հակադրված հետզ-

հետե ձեռք բերված սրբագործմանը, հավատքը հակադրված գործերի հետ, Քրիստոնեական ազատությունը հակադրված Քրիստոնեական պատասխանատվությանը, գերբնականը հակադրված իրողությանը):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՆԱԽԱՍԱՀՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ (ԿԱԼՎԻՆԻԶՄ) ՀԱԿԱԴՐՎԱԾ ՄԱՐԴՈՒ ԱԶԱՏ ԿԱՄՔԻՆ (ԱՐՄԻՆԻԱՆԻԶՄ)
SPECIAL TOPIC: PREDESTINATION (CALVINISM) VERSUS HUMAN WILL (ARMINIANISM)

Տիտոս 2:11-ը բալանսի է բերում ընտրության վերաբերյալ մյուս ՆԿ-յան հատվածները: Ես կարծում եմ, որ աստվածաբանորեն օգտակար կլիներ, որ ձեզ ներկայացնեմ Հռոմեացիների 8:29 և գլուխ 9-ից, ինչպես նաև Եփեսացիների 1-ից մեկնաբանության իմ գրառումները:

I. Հռոմեացիս 8:29 - Պողոսը երկու անգամ օգտագործում է «կանխագիտություն» (*proginōskō*, «նախապես իմանալ»)՝ այստեղ և 11:2-ում: 11:2-ում այն վերաբերում է Իսրայելի հանդեպ ունեցած Աստծո սիրուն, որն Աստված ուներ ժամանակներից առաջ: Հիշեք, որ «ճանաչել, իմանալ» տերմինը եբրայերենում կապված էր մտերմիկ, անձնական հարաբերությանը և ոչ թե ինչ-որ մեկի մասին փաստեր ունենալուն (տես՝ Ծննդ. 4:1; Երեմ. 1:5): Այստեղ պատկերված են իրար կապակցված մի շարք իրադարձություններ (տես՝ Հռոմ. 8:29-30): Այս տերմինը կապված է նախասահմանության հետ: Ինչևէ, պետք է հստակ սահմանել, որ Աստծո կանխագիտությունը ընտրության հիմք չէ, եթե դա այդպես լիներ, ապա ընտրությունը կհիմնվեր ապագայում մեղավոր մարդկության արձագանքի վրա, որը կնշանակեր, որ ընտրությունը կախված է մարդու գործերից ու վարքից: Այս տերմինը նաև հանդիպում է Գործք 26:5; 1 Պետ. 1:2,20 և 2 Պետ. 3:17:

Ա. «կանխագիտություն» (*proginōskō*, «նախապես իմանալ»)

Երկու տերմիններ էլ «կանխագիտություն» (*proginōskō*) կամ «նախասահմանություն» (proorizō) բարդ բառեր են, կազմված «սկզբից, մինչև, նախօրոք» (*pro*) ՆԱԽԴԻՐԻՑ և ուստի պետք է թարգմանվի «իմանալ նախապես», «նախապես սահման դնել» կամ «նախապես չափել»: Նոր Կտակարանում նախասահմանության մասին որոշ չափով հստակ հատվածներն են Հռոմ. 8:28-30, Եփ.1:3-14 և Հռոմ. 9: Այս տեքստերը միանշանակ ընդգծում են Աստծո գերիշխանությունը: Նա է ամեն բանի լիիրավ հսկողը՝ ներառյալ մարդու պատմությունը: Գոյություն ունի աստվածային փրկության ծրագիր, որը իրականանում է ժամանակի մեջ: Ինչևէ, այս ծրագիրը պատահական կամ ընտրողական չէ: Այն հիմնված է ոչ միայն Աստծո գերիշխանության և կանխագիտության վրա, այլ Նրա անփոփոխ կերպարի, որի մեջ մտնում է սերը, ողորմությունը և անարժան շնորհքը: Տե՛ս <u>ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՅԱՀՎԵԻ ՀԱՎԻՏԵՆԱԿԱՆ ՓՐԿՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ</u>:

Մենք պետք է զգույշ լինենք մեր արևմտյան (ամերիկյան) անհատապաշտությունից կամ մեր ավետարանչական նախանձավորության համար, չգունավորելու համար այս հիանալի ճշմարտությունը: Մենք նաև պետք է հսկենք այն, որ չհայտնվենք պատմական աստվածաբանական կոնֆլիկտի մեջ Օգոստինոսի և Պելագիուսի կամ կալվինիզմի և արմենիականության միջև:

Բ. «նախասահմանված» (*proorizō*, «սահմաններ դնել նախապես»)

Նախասահմանությունը Աստծո սերը, շնորհքն ու ողորմությունը սահմանափակող վարդապետություն չէ, և ոչ էլ դրանք դուրս է մղում ավետարանից: Դրա նպատակն է հաստատել հավատացյալներին՝ կատարելագործելով նրանց աշխարհայացքը: Աստված բոլոր մարդկանց համար է (տես՝ Հովհ. 1:12; 3:16; 1 Տիմ. 2:4; 2 Պետ. 3:9; 1 Հովհ. 2:2; 4:14): Աստված է հսկում ամեն բան: Ո՞վ կամ ի՞նչը կարող է մեզ բաժանել Նրանից (տես՝. Հռոմ. 8:31-39): Աստված նայում է ամբողջ պատմությանը որպես ներկայում կատարվող գործողություն: Մարդիկ սահմանափակ են ժամանակի մեջ: Մեր հեռանկարային և մտային կարողությունները սահմանափակ են: Աստծո գերիշխանության և մարդու ազատ կամքի

միջև չկա հակասություն: Սա ուխտի յուրահատկությունն է, այսպես է կառուցված այն: Եվ սա մեկ ուրիշ օրինակ է այն բանի, որ աստվածաշնչյան ճշմարտությունը տրվում է ներքին դիալեկտիկական հակասությամբ: Աստվածաշնչյան վարդապետությունները սովորաբար ներկայացվում են տարբեր տեսանկյուններից: Նրանք հաճախ թվում են պարադոքսային: Ճշմարտությունը հավասարակշռություն է թվացյալ հակառակ զույգերի միջև: Մենք չպետք է դիտավորյալ հեռացնենք այդ լարվածությունը, ընտրելով երկուսից միայն մեկը: Մենք նաև չպետք է առանձնացնենք որևէ աստվածաշնչյան ճշմարտություն դնելով իր վանդակի մեջ:

Կարևոր է նաև ավելացնել, որ ընտրության նպատակը ոչ միայն երկինքն է մեր մահից հետո, այլ քրիստոսանմանությունը հիմա ներկայում (տես՝ Հռոմ. 8: 29-30; 2 Կորնթ. 3:18; Գաղ. 4:19; Եփես. 1: 4; 2:10; 4:13; 1 Թեսաղ. 3:13; 4: 3; 5:23; 2 Թեսաղ. 2:13; Տիտոս 2:14; 1 Պետ. 1:15): Մենք ընտրվել ենք «սուրբ և անարատ» լինելու համար: Աստված գերադասում է մեզ փոխել այնպես, որ ուրիշները կարողանան տեսնել այդ փոփոխությունները և Քրիստոսի հավատքով արձագանքեն Աստծո կանչին: Նախասահմանությունը անձնական առանձնաշնորհում չէ, այլ ուխտի համաձայն պատասխանատվություն: Սա է ամբողջ ուղերձի գլխավոր ճշմարտությունը: Սա է Քրիստոնեության նպատակը: Սրբությունը Աստծո կամքն է բոլոր հավատացյալների համար: Աստծո ընտրությունը քրիստոսանման լինելն է (տես՝ Եփես. 1:4), և ոչ թե հատուկ դիրքը՝ պաշտոնը: Աստծո պատկերը, որը տրվել է մարդուն արարչագործության ժամանակ, (տես՝ Ծննդ. 1:26; 5:1,3; 9:6) պետք է վերականգնվի:

Գ. «կերպարանակից անել Իր Որդու պատկերին» - Աստծո գերագույն նպատակը մեղքի պատճառով կորած պատկերի վերականգնումն է: Հավատացյալները պետք է Քրիստոսանման լինեն (տես՝ Եփես. 1:4):

II. Հռոմեացիս 9

Ա. Հռոմեացիս 9-ը ՆԿ-ի ամենահզոր հատվածներից մեկն է Աստծո ինքնիշխանության մասին (ուրիշ էակ, Եփես. 1:3-14) մինչ գլուխ 10-ը հստակ և պարբերաբար ընդգծում է մարդու ազատ կամքը (տես՝ «յուրաքանչյուրը» Հռոմ. 9: 4, «ով որ» 9:11,13, «բոլորը» 9: 12 /երկու անգամ/): Պողոսը երբեք չի փորձում լուծել այս աստվածաբանական լարվածությունը: Նրանք երկուսն էլ ճշմարտություն են: Աստվածաշնչյան վարդապետություններից շատերը ներկայացված են պարադոքսալ կամ բարբառային զույգերով: Աստվածաբանության համակարգերից շատերը տրամաբանական կես ճշմարտություններ են: Ինչպես Օգոստինոսիանիզմը և Կալվինիզմը, նմանապես կիսապելագյանիզմն ու արմինիանիզմը ունեն ճշմարտության տարրեր և սխալներ: Վարդապետությունների միջև գոյություն ունեցող աստվածաշնչյան լարվածությունը գերադասելի է դիտարկել որպեսել հիմնավորված տեքստին դոգմատիկ, ռացիոնալ, աստվածաբանական համակարգ, որը Աստվածաշունչը դնում է որոշակի մեկնողական սահմանների մեջ:

Բ. Այս նույն ճշմարտությունը հաստատված է Հռոմ. 8:29-30 և Եփ.1:4,11: Այս գլուխը ՆԿ-ում Աստծո ինքնիշխանության ամենաուժեղ արտահայտությունն է: Այն որ Աստված պատասխանատու է Իր ամբողջ արարչագործության և դրա փրկագնման համար՝ անվիճելի է: Այս մեծ ճշմարտությունը երբեք չպետք է փոքրացնել և ոչ էլ անտեսել: Սակայն, Աստծո ուխտի ընտրությունը որպես Իր պատկերով ստեղծված մարդ արարածի հետ հաղորդակցության միջոց պետք է պահպանվի հավասարակշռության մեջ: Անշուշտ ճիշտ է, որ որոշ Հին Կտակարանյան ուխտեր, ինչպես Ծննդոց 15, անպայմանական են և ընդհանրապես կախված չեն մարդու արձագանքից, բայց մյուս ուխտերը պայմանական են՝ կախված մարդու արձագանքից (օրինակ՝ Եդեմի պարտեզը, Նոյը, Մովսեսը, Դավիթը): Աստված Իր ստեղծագործության համար ունի փրկության ծրագիր և ոչ մի մարդ չի կարող ազդել այս ծրագրի վրա: Աստծո կամքով որոշ անհատներ մասնակցում են Իր ծրագրերի իրականացմանը: Մասնակցության այս հնարավորության մեջ Աստծո ինքնիշխանության (Հռոմեացիների 9) և մարդու ազատ կամքի միջև (Հռոմեացիների 10) գոյություն ունի աստվածաբանական լարվածություն:

Ճիշտ չէ ընտրել աստվածաշնչյան մի կարևոր թեմա և անտեսել մյուսը: Վարդապետությունների միջև էլ գոյություն ունի լարվածություն, քանի որ արևելյան ժողովուրդները ճշմարտությունը ներկայացնում են բարբառային կամ լարվածությամբ ներծծված զույգերով: Վարդապետությունները պետք է կապ պահպանեն մեկը մյուսի հետ: Ճշմարտությունը հանդիսանում է բազմաթիվ ճշմարտությունների մի խճանկար:

III. Եփեսացիների 1

Ա. Ընտրությունը հրաշալի վարդապետություն է, սակայն դա չի խրախուսում աչառությունը, այլ կոչ է փրկության միջոց, գործիք հանդիսանալու ուրիշների համար: ՀԿ-ում այս տերմինը հիմնականում կիրառվում է ծառայության համար. ՆԿ-ում այն հիմնականում կիրառվում է փրկության համար, որի արդյունքը լինում է ծառայությունը: Աստվածաշունչը երբեք չի լուծում Աստծո ինքնիշխանության և Մարդու ազատ կամքի միջև առկա թվացյալ հակասությունը, այլ հաստատում է այս երկուսն էլ: Աստվածաշնչյան այդ լարվածության լավ օրինակ է Հռոմեացիների 9-ը՝ Աստծո ինքնիշխան ընտրության վերաբերյալ և Հռոմեացիների 10-ը՝ մարդու կողմից տրված անհրաժեշտ պատասխանի վերաբերյալ (տես՝ 10:11,13):

Աստվածաշնչյան այս լարվածության կորիզը կարելի է գտնել 1:4-ում: Հիսուսը Աստծո ընտրյալ մարդն է և Նրա մեջ բոլորն էլ պոտենցիալ ընտրյալներ են (Կառլ Բարթ): Հիսուսը Աստծո «այո»-ն է ընկած մարդկության կարիքի համար (Կառլ Բարթ): Եփեսացիների 1:4-ը նույնպես օգնում է հստակեցնել այս խնդիրը, պնդելով որ նախասահմանության նպատակը միայն երկինքը չէ, այլ սրբությունը (Քրիստոսակերպությունը): Հաճախ մեզ գրավում են ավետարանի օգուտները՝ շահը և անտեսում ենք պատասխանատվությունները: Աստծո կոչը (ընտրությունը) թե՛ ժամանակի և թե՛ հավիտենության համար է:

Վարդապետությունները կապ ունեն ոչ միայն մեկ իրար հետ կապ չունեցող ճշմարտության, այլ շատ այլ ճշմարտությունների հետ: Լավագույն նմանաբանություն կարող է հանդիսանալ համաստեղությունը հակադրված մեկ աստղի հետ: Աստված ներկայացնում է ճշմարտությունը արևելյան, ոչ թե արևմտյան ժանրերում: Մենք չպետք է անտեսենք վարդապետական ճշմարտությունների (Աստված որպես գերբնական հակադրված ճանաչելի Աստծուն. փրկության վստահությունը հակադրված հարատևության հետ. Հիսուսը որպես Աստծուն հավասար Մեկը հակադրված Հիսուսին, որ ենթարկվում է Հորը. Քրիստոնեական ազատությունը հակադրված Քրիստոնեական պատասխանատվությանը ուխտի զուգընկերոջ հանդեպ, և այլն) բարբառային (պարադոքսալ) զույգերի պատճառով առաջացած լարվածությունը:

Բ. «Նա ընտրեց մեզ» Եփես. 1:4-ում ԱՆՈՐՈՇ ԿԱՏԱՐՅԱԼ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ է, որը շեշտադրում է ենթական: Սա կենտրոնանում է ժամանակներից առաջ Հոր ընտրության վրա: Աստծո ընտրությունը պետք է չէ հասականալ իսլամական դետերմինիզմի իմաստով, և ոչ էլ ուլտրա-Կալվինիզմի «ոմանք ուրիշների դեմ» իմաստով: Աստված խոստացել է փրկել մեղավոր մարդկությանը (տես՝ Ծնն. 3:15): Աստված կանչեց և ընտրեց Աբրահամին, որի միջոցով ընտրեց ամբողջ մարդկությանը (տես՝ Ծնն. 12:3; Ելից 19:5-6): Աստված Ինքը ընտրեց բոլոր այն անձանց, ովքեր կհավատան Քրիստոսին: Աստված միշտ նախաձեռնությունն Իր վրա է վերցնում փրկության հարցում (տես՝ Հովհ. 6:44,65): Այս տեքստը և Հռոմեացիների 9 Օգոստինոսի և Կալվին համար աստվածաշնչյան հիմք են հանդիսանում նախասահմանության վարդապետության համար:

Աստված ընտրեց հավատացյալներին ոչ միայն փրկության համար (արդարացման), այլ նաև սրբացնելու (տես՝ Կողոսացիների 1:10-12): Սա հնարավոր է առնչվում է (1) Քրիստոսի մեջ մեր դիրքի հետ (տես՝ 2 Կորնթ. 5:21) կամ էլ (2) Իր զավակների մեջ Աստված Իր բնավորությունը վերարտադրելու ցանկությունն ունենալու մեջ (տես՝ Եփես. 2:10, Հռոմ. 8:28-29; Գաղ. 4:19) Աստծո կամքն Իր զավակների համար թե՛ սպասվող երկինքն է և թե՛ հիմա Քրիստոսակերպությունը:

«Իր մեջ» խոսքը հանդիսանում է բանալի արտահայտություն Եփես. 1:4-ում: Հոր օրհնությունները, շնորհքը և փրկությունը հոսում են Քրիստոսի միջոցով (տես՝ Հովհ. 14:6): Նկատե՛ք այս քերականական ձևի կրկնությունը Եփես. 1:3-ում՝ «Քրիստոսում», 1:4-ում՝ «Նրանում», 1:7-ում՝ «Նրանում» /երկու անգամ/: Հիսուսը Աստծո «այո»-ն է մեղավոր մարդկության համար (Կարլ Բարթ): Հիսուսը ընտրյալ մարդ է և բոլոր մարդիկ Նրա մեջ պոտենցիալ ընտրյալներ են: Հայր Աստծո բոլոր օրհնությունները հոսում են Նրա միջոցով:

«Նախքան աշխարհի հիմնումը» արտահայտությունը նաև կիրառվում է Մատթ. 25:34, Հովհ. 17:24, 1 Պետ. 1:19-20 և Հայտն. 13:8-ում: Այն ցույց է տալիս Երրորդության Աստծո փրկագործությունը նախքան Ծննդ. 1:1: Մարդիկ սահմանափակ են ժամանակի իրենց զգացողության մեջ. մեր համար ամեն ինչ անցյալ է, ներկա և ապագա, բայց Աստծո համար այդպես չէ:

Նախասահմանության նպատակը սրբությունն է, ոչ թե արտոնյալ լինելը: Աստծո կանչը միայն Ադամի մի քանի երեխաների համար չէ, այլ ուղղված է ամբողջ մարդկությանը: Այն կոչ է լինել այնպիսին, ինչպիսին Աստված նպատակ ուներ մարդկության համար, որ լինեին՝ Իր պես (տես՝ 1 Թեսաղ. 5:23, 2 Թեսաղ. 2:13), Իր պատկերով (տես՝ Ծննդ. 1:26-27): Սուրբ կյանքի փոխարեն նախասահմանությունը աստվածաբանական օրինաչափության վերածելը ողբերգություն է: Հաճախ մեր աստվածաբանություններն ավելի բարձրաձայն են խոսում, քան աստվածաշնչյան տեքստերը:

«Անարատ» (*amōmos*) կամ «արատներից զերծ» տերմինը կիրառվում է՝

1. Հիսուսի համար (տես՝ Եբր. 9:14; 1 Պետ. 1:19)
2. Զաքարիայի և Եղիսաբեթի համար (տես՝ Ղուկ. 1:6)
3. Պողոսի համար (տես՝ Փիլ. 3:6)
4. բոլոր իրական քրիստոնյաների համար (տես՝ Փիլ. 2:15; 1 Թեսաղ. 3:13; 5:23)

Յուրաքանչյուր Քրիստոնյայի համար Աստծո անփոփոխ կամքը հետագայում երկինքը չէ, այլ հիմա Քրիստոսի նման լինելը (տես՝ Հռոմ. 8:29-30; Գաղ. 4:19; 1 Պետ. 1:2): Հավատացյալները պետք է արտացոլեն Աստծո բնավորությունը ամբողջ կորած՝ մեղավոր աշխարհի համար՝ ավետարանչության նպատակով:

Քերականորեն Տիտոս 2:2-ում «սիրով» արտահայտությունը կարող է կապ ունենալ կա՛մ Տիտոս 2:4-ի, կա՛մ էլ 5-ի հետ: Ամեն դեպքում, երբ այս արտահայտությունը կիրառվում է Եփեսացիների մեջ այլ հատվածներում, այն միշտ նկատի ունի մարդու սերն Աստծո հանդեպ (տես՝ Եփես. 3:17; 4:2,15,16):

Գ. Եփես. 1:5-ում՝ «Նա մեզ նախասահմանեց» արտահայտությունը ԱՆՈՐՈՇ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ԴԵՐԲԱՅ է: Այս հունարեն տերմինը բաղադրյալ կազմություն ունի՝ «նախքան» և «նշել» բառերից: Այն վերաբերում է Աստծո կանխորոշված փրկագործության ծրագրին (տես՝ Ղուկ. 22:22, Գործք 2:23, 4:28, 17:31, Հռոմ. 8:29-30): Նախասահմանությունը մի քանի ճշմարտություններից մեկն է, որը կապ ունի մարդկության փրկության հետ: Այն իրար հետ կապված մի շարք աստվածաբանական ճշմարտությունների մաս է կազմում: Այն երբեք էլ նախատեսված չի եղել առանձնացվելու: Աստվածաշնչյան ճշմարտությունը տրվում է լարվածությամբ լի, պարադոքսալ զույգերի շարքերի տեսքով: Հարանվանությունների առաջացումը պատճառ հանդիսացավ շեշտադրելու այս դիալեկտիկ ճշմարտություններից միայն մեկը (նախասահմանությունը հակադրված մարդու ազատ կամքին, հավատացյալի երաշխիքը հակադրված սրբերի հարատևությանը, առաջին մեղքը հակադրված գիտակցված մեղքին, անմեղությունը հակադրված քիչ մեղանչելուն, անմիջապես հռչակված արդարացումը հակադրված հետզհետե ձեռք բերված սրբագործմանը, հավատքը հակադրված գործերի հետ, Քրիստոնեական ազատությունը հակադրված Քրիստոնեական պատասխանատվությանը, գերբնականը հակադրված իրողությանը):

Աստծո ընտրությունը հիմնված չէ մարդու գործերի կանխագիտության վրա, այլ Իր գթառատության (տես՝ Եփես. 1:7,9,11): Նա ցանկանում է, որ բոլորը (ոչ թե միայն յուրա-

հատուկ մարդիկ, ինչպես օրինակ Գնոստիկներն են կամ մերօրյա ուլտրա-կալվինիստները) փրկվեն (տես՝ Եզեկ. 18:21-23,32, Հովհ. 3:16-17, 1 Տիմ. 2:4; 4:10; Տիտոս 2:11; 2 Պետ. 3:9; 1 Հովհ. 2:2; 4:14): Աստծո շնորհքը (Աստծո բնավորությունը) այս հատվածի աստվածաբանական բանալին է (տես՝ Եփես. 1:6ա, 7գ, 9բ), ինչպես որ Աստծո ողորմությունը նախասահմանության վերաբերյալ այլ հատվածների բանալին է, Հռոմ. 9-11:

Մեղավոր մարդկության միակ հույսը Աստծո շնորհքն ու ողորմությունն է (տես՝ Եսայի 53:6 և մի քանի այլ ՀԿ-յան տեքստեր, որոնք մեջբերված են Հռոմ. 3:9-18-ում): Այս առաջին աստվածաբանական գլուխները մեկնաբանելիս շատ կարևոր է հասկանալ, որ Պողոսը շեշտադրում է այն բաները, որոնք ընդհանրապես կապ չունեն մարդկային գործերի հետ՝ նախասահմանությունը (Եփեսացիների 1), շնորհքը (Եփեսացիների 2), և փրկագործության Աստծո հավիտենական ծրագիրը (առեղծված՝ խորհուրդ, Եփես. 2:11-3:13): Սա սուտ վարդապետների կողմից մարդու արժանիքների և հպարտության վրա դրած շեշտադրումները հակակշռելու համար էր:

❖ **«Իրեն որդեգրության»** Սա Պողոսի ընտանի փոխաբերություններից է (տես՝ Հռոմ. 8:15, 23, 9:4, Գաղ. 4:5): Սա այն փոխաբերություններից մեկն է, որ Պողոսը գործածում է նկարագրելու փրկությունը՝ շեշտադրվելով երաշխիքը, ապահովությունը: Հռոմեական օրինական դաշտում դժվար և թանկարժեք է եղել երեխա որդեգրելը, սակայն որդեգրելուց հետո այն շատ պարտավորեցնող էր: Հռոմեացի հայրը օրինապես իրավունք ուներ ժառանգությունից զրկել կամ նույնիսկ սպանել իր բնածին երեխաներին, սակայն որդեգրածների վրա այս իրավունքները չուներ: Սա արտացոլում է հավատացյալի ապահովությունը Քրիստոսի մեջ (տես՝ Եփես. 2:5,9, Հովհ. 6:37,39, 10:28):

NASB	**«Իր կամքի բարի մտադրությամբ»**
NKJV, NRSV	**«Իր կամքի բարեհաճությամբ»**
TEV	**«սա նրա հաճույքը և նպատակն էր»**
NJB	**«Այսպիսին էր նրա նպատակը և բարեհաճությունը»**

Աստծո ընտրությունը հիմնված չէ մարդու գործերի կանխագիտության վրա, այլ Նրա գթառատ, ողորմած բնավորության (տես՝ Եփես. 1:7՝ «Իր շնորհքի ճոխության չափով», Եփես. 1:9՝ «Իր բարի կամքի համաձայն», Եփես. 1:11՝ «Իր նպատակի համաձայն»): Նա ցանկանում է, որ բոլորը (ոչ թե որոշ հատուկ մարդիկ, ինչպես օրինակ գնոստիկները կամ մերօրյա ուլտրակալվինիստները) փրկվեն (տես՝ Եզեկ. 18:21-23,32; Հովհ. 3:16-17, 1 Տիմ. 2:4, 4:10, Տիտոս 2:11, 2 Պետ. 3:9, 1 Հովհ. 2:2, 4:11): Աստծո շնորհքը (Աստծո բնավորությունը) այս հատվածի աստվածաբանական բանալին է (տես՝ Եփես. 1:6ա, 7գ, 9բ), ինչպես որ Աստծո ողորմությունը բանալի է նախասահմանության շուրջ այլ հատվածներում՝ Հռոմեացիների 9-11:

Մեղավոր մարդկության միակ հույսը Աստծո շնորհքն ու ողորմությունն է (տես՝ Գործք 15:11, Հռոմ. 3:24, 5:15, Եփես. 2:5,8) և Նրա անփոփոխ էությունը (տես՝ Սաղմ. 102:27, Մաղ. 3:6, Հակ. 1:17, 1 Հովհ. 1:5):

❖ **«Իրեն...Հիսուս Քրիստոսի ձեռքով»** Այս արտահայտությունը նկարագրում է Հոր սերը, ինչպես Հովհ. 3:16-ը (տես՝ 2 Կորնթ. 13:14): Հիսուսը Հայր Աստծո ծրագիրն է ամեն բան վերականգնելու համար (այսինքն՝ Մեսիան, տես՝ Եփես. 1:10, 1 Կորնթ. 15:25-28, Կող. 1:15-23): Միայն մեկ ճանապարհ կա և այդ ճանապարհը անձ է (տես՝ Հովհ. 14:6, Գործք 4:12, 1 Տիմ. 2:5): Եփեսացիների թեման Քրիստոսի մեջ ամեն բաների միաբանությունը՝ կապն է:

1:6 «ի գովություն Իր շնորհքի գերազանցության» Հոր նախաձեռնող սերը Հիսուս Քրիստոսով հայտնում է հենց Իր էությունը (տես՝ Հովհ. 1:14,18): Այս արտահայտությունը կրկնվում է երեք անգամ (տես՝ Եփես. 1:6,12,14) և հաստատում է Երրորդության երեք անձերի գործը: Տե՛ս Հատուկ Թեմա 1:3-ում:

1. Հայր Աստվածը ժամանակից առաջ, Եփես. 1:3-6
2. Որդի Աստվածը ժամանակի մեջ, Եփես. 1:7-12
3. Հոգի Աստվածը ժամանակի միջով, Եփես. 1:13-14

Ամեն դեպքում, Եփես. 1:3-14-ում հունարեն երկար նախադասության մեջ Հայր Աստվածն է պարբերաբար մեծարվում:

❖ **«փառք»** ՀԿ-ում «փառք» (*kabod*) բառի համար Եբրայերեն ամենատարածված տերմինը սկզբնապես եղել է առևտրային տերմին (որը կապ ուներ զույգ կշեռքի հետ), որը նշանակում էր «ծանր գտնվել»: Այն ինչ ծանր էր՝ արժեքավոր էր կամ ուներ հատուկ արժեք: Բառին ավելացվել է պայծառության գաղափարը, որպեսզի արտահայտի Աստծո վեհափառությունը (այսինքն՝ *Shekinah* փառքի ամպը): Միայն Նա է արժանի և պատվելի: Նա չափազանց պայծառ է մեղավոր մարդկության համար, որ նայեն Իրեն (տես՝ Ծննդ. 16:13, 32:30, Ելից 20:19, 33:20, Դատ. 6:22-23, 13:22): Աստծուն ճշմարտապես կարող ենք ճանաչել միայն Քրիստոսի միջոցով (տես՝ Հովհ. 1:1-14, Կող. 1:15, Եբր. 1:3):

«Փառք» տերմինը ինչ-որ տեղ երկիմաստ է՝

1. Այն կարող է համազոր լինել «Աստծո արդարությանը»
2. Այն կարող է վերաբերել Աստծո «սրբությանը» կամ «կատարելությանը»
3. Այն կարող է վերաբերել Աստծո պատկերին, որով ստեղծվել էր մարդկությունը (տես՝ Ծննդ. 1:26-27, 5:1, 9:6), որը սակայն հետագայում ապականվեց անկախության համար ապստամբ ցանկության միջոցով (տես՝ Ծննդ. 3:1-22):

NASB	**«որը Նա ձրիաբար շնորհեց մեզ»**
NKJV	**«որով Նա մեզ ընդունելի դարձրեց»**
NRSV	**«որը Նա ձրիաբար շնորհեց մեզ»**
TEV	**«մեզ տված ձրի պարգևի համար»**
NJB	**«նրա ձրի պարգևը մեզ»**

«Հաճեցավ» (*charitoō*) հունարեն տերմինն ունի «շնորհքի» (*charis*) նույն արմատը: Հոր շնորհքը, ողորմությունը և սերը հոսում է (տես՝ Եփես. 1:8) չարչարվող Մեսիայի միջոցով դեպի ընկած՝ մեղավոր մարդկությունը (տես՝ Ծննդ. 3:15, Եսայի 53): Աստծո սերը հոսում է մեղավոր մարդկությանը Նրա էության շնորհիվ, ոչ թե մեր: Բանալին Աստծո բնավորությունն է, ոչ թե մարդու գործերը:

❖ **«Սիրելու մեջ»** Սա կատարյալ կրավորական դերբայ է: Հիսուսը Սիրելի Որդին էր և է և միշտ լինելու է: Այս տիտղոսը կիրառվում է Սեպտուագինտայում (LXX) Մեսիայի համար: Այն փոխարինվեց «Հեսուրուն» (Երուսաղեմ) բառով 2 Օրինաց 32:15, 33:5, 26, և Եսայի 44:2-ում: Հայրը այս բնութագրական տիտղոսը գործածեց Հիսուսի համար Մատթ. 3:17-ում (Հիսուսի մկրտության ժամանակ), Մատթ. 12:18 (ՀԿ-յան մի մեջբերում է , այսինքն՝ Եսայի 42:1-3) և Մատթ. 17:5-ում (Հիսուսի այլակերպության ժամանակ): Պողոսն այս նույն տերմինը գործածում է Հիսուսի համար Կող. 1:13:

1:7 «մենք ունենք» Այս բայը ներկա ժամանակով է, մինչ մնացած բայերը բոլորը անորոշ կատարյալ ժամանակում են: Մենք ներկայումս ունենք բոլոր այն օգուտները՝ օրհնությունները, որոնց Աստված հասել է Քրիստոսի մեջ: Սակայն ուշադրություն դարձրե՛ք, որ այս նույն հունարեն նախադասության մեջ (Եփես. 1:14) փրկությունը ապառնի ժամանակ է: Փրկությունը սկսում է Աստծո կանչով, Հոգու կողմից հետամուտ լինելով (տես՝ Հովհ. 6:44,65): Դրան հետևում է զղջացող հավատքով որոշում, որին հաջորդում է վստահության, հնազանդության և հարատևության կյանք, որը մի օր իր կավարտվի կատարյալ Քրիստոսակերպությամբ (տես՝ 1 Հովհ. 3:2): Փրկությունը փոխհարաբերություն է, ինչպես նաև որոշման դավանություն, անձ է՝ ինչպես նաև պատգամ:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՓՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՀՈՒՆԱՐԵՆ ԲԱՅԵՐԻ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԸ
SPECIAL TOPIC: GREEK VERB TENSES USED FOR SALVATION

Փրկությունը իր չէ, այլ փոխհարաբերություն: Այն չի վերջանում Քրիստոսին վստահելով, այլ միայն սկսվում է (դարպասը, ապա ճանապարհը): Այն հրշեջ ապահովագրության քաղաքականություն չէ, ոչ էլ երկինք տանող տոմս, այլ Քրիստոսի նմանությանը հասնելու աճման կյանք: Մենք Ամերիկայում ունենք մի այսպիսի ասացվածք, որն ասում է. որքան շատ են զույգերը միասին ապրում, այնքան նմանվում են: Սա՛ է փրկության նպատակը:

ՓՐԿՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԱՎԱՐՏՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ (ԱՆԴԵՄ)
- Գործք 15:11
- Հռոմեացիս 8:24
- 2 Տիմոթեոս 1:9
- Տիտոս 3:5
- Հռոմեացիս 13:11 (ԱՆԴԵՄԸ ԱՊԱՌՆԻի հետ համակցված)

ՓՐԿՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՎԻՃԱԿ (ՎԱՂԱԿԱՏԱՐ)
- Եփեսացիներին 2:5,8

ՓՐԿՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՂ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ (ՆԵՐԿԱ**)**
- 1 Կորնթացիներին 1:18; 15:2
- 2 Կորնթացիներին 2:15
- 1 Պետրոս 3:21

ՓՐԿՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԱՊԱԳԱՅԻ ՎԱԽՃԱՆ (ԱՊԱՌՆԻ ԺԱՄԱՆԱԿ կամ կոնտեքստ)
- Հռոմեացիներին 5:9,10; 10:9,13
- 1 Կորնթացիներին 3:15; 5:5
- Փիլիպեցիներին 1:28
- 1 Թեսաղոնիկեցիներին 5:8-9
- Եբրայեցիներին 1:14; 9:28
- 1 Պետրոս 1:5

Հետևաբար, փրկությունը սկսվում է ներքին հավատքի որոշմամբ (տես՝ Հովհ.1:12; 3:16; Հռոմ.10:9-13), սակայն սա պետք է հանգեցնի ապրելակերպ հանդիսացող հավատքին (տես՝Հռոմ.8:29; Գաղ.2:19-20; Եփես.1:4; 2:10), որը մի օր տեսանելի կդառնա (տես՝ 1 Հովհ.3:2): Այս վերջնական վիճակը կոչվում է փառավորում: Սա կարող է լուսաբանվել որպես.
1. ներքին փրկություն՝ արդարացում (փրկված մեղքի պատժից)
2. ընթացիկ փրկություն՝ սրբացում (փրկված մեղքի զորությունից)
3. վերջնական փրկություն՝ փառավորում (փրկված մեղքի ներկայությունից)

❖ **«փրկություն»** Սա ուղղակիորեն նշանակում է «ազատված լինել ինչ-որ բանից» (տես՝ Հռոմ. 3:24, Կող.1:14): Սա ՀԿ-յան (*gaal*) տերմինի հոմանիշն է, որը նշանակում է «հետ գնել» երբեմն բարեկամի (*go'el*) միջնորդությամբ: Այս տերմինը գործածվել է ՀԿ-ում նկատի ունենալով ստրուկներին, ռազմագերիներին հետ գնելը: Պողոսը կիրառում է հունարեն համարժեք տերմինը չոր անգամ Եփեսացիներում և Կողոսացիներում (տես՝ Եփես.1:7, 14 և 4:30, Կող.1:14): Այն արտացոլում է անձնական միջնորդություն, որով Աստված փրկություն է բերում: Այն չի կենտրոնանում, թե ում է բերում փրկությունը կամ վճարի չափի վրա: Մարկոս 10:45-ը հստակ սահմանում է, որ Հիսուսը եկավ վճարելու մեղավոր՝ ընկած մարդկության փրկագինը (տես՝ 1 Պետ.1:18-19): Մարդիկ մեղքի ստրուկներ էին (տես՝ Եսայի 53:6, մի քանի ՀԿ-յան մեջբերումներ Հռոմ.3:9-18, 1 Պետ.2:24-25-ում): Տե՛ս <u>Հատուկ Թեմա. Փրկագին, փրկագնել,</u> Կող.1:14-ում:

❖ **«Նրա արյամբ»** Արյունը մահվան փոխաբերություն է (տես՝ Ծնն.9:4, Ղևտ.17:11, 14): Սա վերաբերում է Հիսուսի փոխանորդական, զոհաբերվող մահվանը: Նա մահացավ մեր փոխարեն, մեր մեղքի պատճառով (տես՝ Ծնն.3:15, Եսայի 53, Հռոմ.3:25, 5:9, 2 Կորնթ.5:21, Եփես. 2:13, Կող. 1:20, Եբր.9:22):

Հնարավոր է հույն սուտ վարդապետների (այսինքն՝ գնոստիկների) առկայությունն էր պատճառը, որ այստեղ Պողոսը Հիսուսին ներկայացրել է որպես մարդ (արյուն, մարմին), քանի որ նրանք ուրանում էին Հիսուսի մարդեղությունը:

❖ **«թողություն»** Բառացի սա «հեռու ուղարկել» է նշանակում: Քավության Օրը երկու նոխազներ էին ընդգրկվում Ղևտացիների 16-ի ամեն տարի կատարվող ծեսի ժամանակ:

1. դրանցից մեկը հեռու էր ուղարկվում՝ Իսրայելի մեղքն իր հետ հեռու տանելու խորհրդով (այսինքն՝ երբ Աստված ներում է, Աստված մոռանում է, տես՝ Սաղմ. 103:12, Եսայի 1:18, 38:17, 44:22, և Միքիա 7:18):
2. մյուսը զոհաբերվում էր՝ խորհրդապատկերելով այն փաստը, որ մեղքը կյանք է արժենում:

Հիսուսը վերցրեց անկում ապրած մարդկության մեղքը՝ մեռնելով նրանց փոխարեն (տես՝ 2 Կորնթ. 5:21, Կող. 1:14), սրանով միավորելով երկու իմաստները:

❖ **«մեղքեր»** Սա հունարեն մեղքի (*paraptōma*) համար գործածվող տերմինն է, բառացի նշանակում է «մի կողմի վրա ընկնել»: Այն առնչվում է ՀԿ-ում մեղքի համար կիրառվող բառերի հետ, որոնք նշանակում են չափանիշից՝ ստանդարտից շեղվել, խոտորվել: «Եղեգ» տերմինը շինարարական տերմին էր, որը փոխաբերական իմաստով կիրառվում էր Աստծո բնավորության համար: Աստված է միայն ստանդարտը, որի համեմատ բոլոր մարդիկ շեղված են և ապականված (տես՝ Եսայի 53:6, Հռոմ. 3:9-23, 11:32, Գաղ. 3:22):

❖ **«Նրա շնորհի ճոխության չափով»** Քրիստոսում մեր ունեցած թողությունը՝ ներումը, մենք չենք կարող վաստակել (տես՝ Եփես. 2:8-9, 2 Տիմ. 1:9, Տիտոս 3:5): «Ճոխություն» տերմինը հաճախ է կիրառվում բանտից գրված Պողոսի թղթերում՝ «Նրա շնորհքի ճոխությունը» Եփես. 1:7, 2:7, «Նրա փառքի ճոխությունը» Եփես. 1:18, 3:16, «ողորմությամբ առատ /ճոխ/»՝ Եփես. 2:4, «Քրիստոսի հարստությունները» Եփես. 3:8: Փրկված մարդկությանը Քրիստոսի մեջ շնորհվել է Աստծո բնավորության ճոխությունները:

1:8 «տվեց/ շռայլեց» Պողոսն այս տերմինը (*perisseuō*) նորից ու նորից կիրառում է (տես՝ Հռոմ. 5:15, 15:13, 1 Կորնթ. 15:58, 2 Կորնթ. 1:5, 8:2,7, 9:8. Եփես. 1:8, Փիլ. 1:9, 4:12,18, Կող. 2:7, 1 Թեսաղ. 4:1): Այն արտահայտում է Քրիստոսի մեջ Աստծո շնորհքի և հոգածության կատարյալ չափը և ավելին, որ Պողոսն էր զգացել: Աստծո սերը նման է դուրս հորդող շատրվանի կամ արտեզիան ջրհորի:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՌԱՏ (*periseuō*)
SPECIAL TOPIC: ABOUND (*periseuō*)

Այս տերմինը հիմնականում կիրառում է Պողոսը: Այն մատնանշում է այն, ինչը ավելցուկից դուրս է հորդում (այսինքն՝ դրական իմաստով):

1. Աստծո ճշմարտությունը Նրա փառքով առատացած, Հռոմ. 3:7
2. Ձրի պարգևը այդ միակ մարդու՝ Հիսուս Քրիստոսի շնորհքի մեջ, առատացած, Հռոմ. 5:15
3. Հավատացյալները առատ հույսի մեջ, Հռոմ. 15:13
4. Հավատացյալները Աստծուն չեն մեծարում հատուկ կերակուրներ ուտելով կամ չուտելով, 1 Կորնթ. 8:8 (տես՝ Մարկ. 7:15, 17-23)
5. Հավատացյալները առատ՝ հարուստ են եկեղեցու համար շինություն լինելով, 1 Կորնթ. 14:12
6. Հավատացյալները հարուստ են Տիրոջ գործի մեջ, 1 Կորնթ. 15:58
7. Հավատացյալները առատապես բաժնեկցում են Քրիստոսի չարչարանքն ու հարստությունը Քրիստոսի մխիթարությամբ, 2 Կորնթ. 1:5

8. Արդարության ծառայությունը առատանում է փառքի մեջ, 2 Կորնթ. 3:9
9. Հավատացյալների գոհությունը պետք է առատանա Աստծո փառքի համար, 2 Կորնթ. 4:15
10. Հավատացյալների ցնծության առատությունը, 2 Կորնթ. 8:2
11. Հավատացյալները հարուստ են ամեն ինչում (հավատք, խոսք, գիտություն, ջանասիրություն և սեր), նաև Երուսաղեմի եկեղեցու համար իրենց նվիրատվություն-ներով, 2 Կորնթ. 8:7
12. Հավատացյալների համար շնորհքի առատությունը, 2 Կորնթ. 9:8
13. Հավատացյալների առատ գոհությունը Աստծուն, 2 Կորնթ. 9:12
14. Աստծո շնորհքի ճոխությունը տարածված հավատացյալների վրա, Եփես. 1:8
15. Հավատացյալների սերը կարող է դեռևս ավելի ու ավելի առատանա, Փիլ. 1:9
16. Հավատացյալների վստահությունը Պողոսի վրա առատանում է Քրիստոսով, Փիլ. 1:26
17. Առատանալով, Փիլ. 4:12,18
18. Հավատացյալները հարուստ երախտագիտությամբ, Կող. 2:7
19. Հավատացյալները միմյանց հանդեպ առատ սիրով ավելանալով, 1 Թեսաղ. 3:12
20. Առատ աստվածահաճո կյանքերով, 1 Թեսաղ. 4:1
21. Հավատակիցների հանդեպ առատ սիրով, 1 Թեսաղ. 4:10

Ինչպես որ Պողոսի Քրիստոսով Աստծո շնորհքի հասկացողությունը «վեր ու ավելի» էր, այնպես էլ, հավատացյալների կողմից իրենց ամենօրյա կյանքերում այդ «վեր ու ավելի» սիրո և շնոհքի մեջ մեջ ապրելու անհրաժեշտությունն է:

❖ **«ամբողջ իմաստությամբ ու հասկացողությամբ»** Սա վերաբերում է հասկացողության Աստծո պարգևին (ոչ թե գնոստիկ սուտ վարդապետների ծածուկ գիտությունը), որը Նա տվեց, որպեսզի մեղավոր մարդկությունը կարողանա հասկանալ ավետարանի ենթատեքստը (տես՝ Եփես. 1:3,4,5,6,7,9,10 և 18-23, Ղուկ. 1:17, Կող. 1:9): Սուտ վարդապետները շեշտադրում էին ծածուկ գիտությունը: Աստծո իմաստությունը Քրիստոսի մեջ է: Իսկ Քրիստոսը հասանելի է բոլորի համար:

1:9 «խորհուրդ» Պողոսը հաճախ է կիրառում այս տերմինը (տես՝ Հռոմեացիների 11:25, 16:25, 1 Կորնթ. 2:7, 4:1, Եփես. 1:9, 3:3,4,9, 6:19, Կող. 1:26, 2:2,, 4:3, 2 Տիմ. 1:9-10): Այն ունի մի քանի տարբեր նշանակություններ՝ Աստծո փրկության ծրագրի տարբեր կողմերի համար: Եփես. 2:11-3:13-ում այն վերաբերում է Քրիստոսի մեջ Աստծո բոլոր ազգերի՝ հրեաների և հեթանոսների միաբանությանը Աստծո հետ: Սա միշտ եղել է Աստծո ծրագիրը (տես՝ Ծննդ. 3:15, 12:1-3, Ելից 19:4-6, Եփես. 2:11-3:13): Սա էր եղել մշտապես միաստվածության (մեկ և միայն մեկ Աստված) ենթատեքստը: Այս ճշմարտությունը պահված է եղել անցյալ դարերում, սակայն այժմ հայտնվել է Քրիստոսի մեջ: Տե՛ս Հատուկ Թեմա Եփես. 3:3:

❖ **«Իր կամքի»** Տե՛ս հետևյալ <u>Հատուկ Թեման. Աստծո Կամքը</u>:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՍՏԾՈ ԿԱՄՔԸ (*thelēma*)
SPECIAL TOPIC: THE WILL (*thelēma*) OF GOD

Աստծո «կամքը» բովանդակում է մի քանի կատեգորիաներ՝

ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ԱՎԵՏԱՐԱՆԸ

- Հիսուսն եկավ կատարելու Հոր կամքը (տես՝ 4:34; 5:30; 6:38)
- վերջին օրը հարություն տալու բոլոր նրանց, ում Հայրը տվեց Որդուն (տես՝ 6:39)
- որ բոլորը հավատան Որդուն (6:29,40)
- Աստծո կամքը կատարելու հետ կապված պատասխանված աղոթք (տես՝ 9:31 և 1 Հովհ.5:14)

ՀԱՄԱՆՄԱՆ ԱՎԵՏԱՐԱՆՆԵՐԸ

- Աստծո կամքը կատարելը կարևոր է (տես՝ Մատթ.7:21)
- Աստծո կամքը կատարողը դառնում է Հիսուսի քույրը կամ եղբայրը (տես՝ Մատթ.12:50; Մարկ.3:35)
- Աստծո կամքը չէ, որ որևէ մեկը կորչի (տես՝ Մատթ.18:14; 1 Տիմ.2:4; 2 Պետ.3:9)
- Գողգոթան Հիսուսի համար Հոր կամքն էր (տես՝ Մատթ.26:42; Ղուկ.22:42)

ՊՈՂՈՍԻ ԹՂԹԵՐԸ

- բոլոր հավատացյալների հասունությունը և ծառայությունը (տես՝ Հռոմ.12:1-2)
- հավատացյալները ազատվեն այս չար ժամանակներից (տես՝ Գաղ.1:4)
- Աստծո կամքը Նրա փրկարար ծրագիրն էր (տես՝ Եփես.1:5,9,11)
- հավատացյալներ, որոնք կվերապրեն և կապրեն Հոգով լեցուն կյանք (տես՝ Եփես.5:17-18)
- հավատացյալներ, որոնք լցված կլինեն Աստծո գիտությամբ (տես՝ Կող.1:9)
- կատարյալ և լիարժեք դարձած հավատացյալներ (տես՝ Կող.4:12)
- սրբացված հավատացյալներ (տես՝ 1 Թեսաղ.4:3)
- ցանկացած իրավիճակում զոհունակ սիրտ ունեցող հավատացյալներ (տես՝ 1 Թեսաղ.5:18)

ՊԵՏՐՈՍԻ ԹՂԹԵՐԸ

- օրինապահ հավատացյալներ (քաղաքացիական իշխանություններին ենթարկվող) և ուստի անմիտներին լռեցնող, որով հնարավորություն են ստեղծում ավետարանչության համար (տես՝ 1 Պետ.2:15)
- չարչարվող հավատացյալներ (տես՝ 1 Պետ.3:17; 4:19)
- անձնակենտրոն կյանքով չապրող հավատացյալներ (տես՝ 1 Պետ.4:2)

ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ԹՂԹԵՐԸ

- հավիտյան ապրող հավատացյալներ (տես՝ 1 Հովհ.2:17)
- պատասխանված աղոթքի պատճառ հանդիսացող հավատացյալներ (տես՝ 1 Հովհ.5:14):

1:10

NASB	**«կառավարում»**
NKJV	**«տնտեսություն»**
NRSV	**«ծրագիր»**
TEV	**«այս ծրագիրը»**
NJB	**«նրա համար ի մի բերելու»**

Սա բառացի նշանակում է «տնային տնտեսություն» (*oikonomia*): Պողոսը կիրառում է այս տերմինը մի քանի տարբեր նշանակությամբ:

1. Ավետարանը քարոզելու Առաքելական հանձնարարության (տես՝ 1 Կորնթ.9:17, Եփես.3:2, Կող.1:25)
2. փրկության հավիտենական ծրագիրը, «խորհուրդը» (տես՝ Եփես.1:9-10, 3:9, 1 Կորնթ.4:1)
3. փրկության ծրագրի և դրան ուղեկցող ապրելակերպի մեջ վարժվելը (տես՝ 1 Տիմ.1:4)

Այս համարը նախանշան է հանդիսանում գրքի կենտրոնական թեմայի (Քրիստոսի մեջ ամեն բաների միաբանության) համար, որը լիարժեք կերպով զարգանում է Եփես.4:1-6-ում:

❖ **«ժամանակների լրմանը»** Այս արտահայտությունը շեշտադրում է (ինչպես անում է կանխասող մարգարեությունը), որ Աստված վերահսկում է պատմությունը: Ճիշտ ժամանակին Աստված ուղարկեց Քրիստոսին և ճիշտ ժամանակին Նա կվերադառնա:

❖ **«որ ամեն բան ի մի բերի Քրիստոսի մեջ»** Կոյնե հունարենում (Ք.Ա. 200թ-ից մինչև մ.թ. 200թ .եղել է Միջերկրականի երկրներում առևտրային լեզուն, հասարակ մարդկանց լեզուն) այս բաղադրյալ տերմինը բառացի նշանակում է «մի քանի բաների միավորումը մի գլխի ներքո»: Սա Քրիստոսի գործի տիեզերական կարևորությանը վերաբերող համար է (որը հստակ երևում է 1 Կորնթ.15:24-28 և Կող.1:17-22-ում): Սա Կողոսացիների կենտրոնական թեման է: Քրիստոսը ոչ միայն Իր մարմնի՝ եկեղեցու «գլուխն» է, այլ նաև Իր ստեղծագործության (*kosmos*):

1:11

NASB, NKJV, NRSV	**«մենք ժառանգություն ենք ստացել»**
TEV	**«Աստված ընտրել է մեզ Իր սեփական ժողովուրդը լինելու»**
NJB	**«մենք ստացել ենք մեր ժառանգությունը»**

Սա բառացի նշանակում է «մենք ընտրվել ենք որպես ժառանգություն»՝ անորոշ կատարյալ կրավորական սահմանական եղանակ: Սկզբնապես ՀԿ-ում սա վերաբերում էր միայն Ղևտացիներին (Ղևիի ցեղի մարդիկ դարձան քահանաներ, Տաճարի սպասավորներ և Օրենքի ուսուցիչներ), որոնք Ավետյաց Երկրում հողատարածք չժառանգեցին (տես՝ Թվոց 18:20, 2 Օրինաց 10:9, 12:12, 14:27,29): Նրանք մի քանի քաղաքներ էին ստացել՝ Հեսու 20-21: Հետզհետե այն սկսեց վերաբերել այն ճշմարտությանը, որ Աստված Ինքն է բոլոր հավատացյալների ժառանգությունը՝ բաժինը, իսկ նրանք Իրենն են (տես՝ Սաղմ.16:5, 73:26, 119:57, Ողբ 3:24): Այն նաև դարձավ փոխաբերություն Աստծո ժողովրդի համար (տես՝ 2 Օրինաց 4:20, 7:6, 9:26, 29, 14:2, 2 Թագ.21:3, 3 Թագ.8:51,53, 4 Թագ. 21:14, Սաղմ.28:9, 33:12, 68:9, 78:62, 71, 94:14, 106:5,40, Եսայի 19:25, 47:6, 63:17, Երեմ.10:16, 51:19): ՆԿ-ը փոխարինում է հողի՝ երկրի խոստումները Աստծո ընտանիքի մաս կազմելու խոստման հետ: ՆԿ-ի հեղինակները տիեզերականացնում են հրե-հեթանոս խտրականությունը այն վերածելով հավատացյալ-անհավատի օրինակի: Նույնը գործում է Երուսաղեմ քաղաքի դեպքում, որը դառնում է Նոր Երուսաղեմը (տես՝ Հայտն.3:12, 21:2,10), որը երկնքի փոխաբերություն է և ոչ թե աշխարհագրական տեղանք:

❖ **«նախասահմանված լինելով ըստ Նրա նպատակի»** Այս անորոշ կատարյալ կրավորական դերբայը արտահայտում է մի ճշմարտություն, որ ընտրությունը Աստծո շնորհքի համաձայն է և ոչ թե մարդու արժանիքների (տես՝ Եփես.2:8-9, որն ունի երեք հերքում՝ «և դա ձեզնից չէ», «Աստծո պարգևն է» և «ոչ թե գործերով, որպեսզի ոչ ոք չպարծենա»): Այս նույն տերմինաբանությունը կարելի է գտնել Հռոմ.8:28-29-ում: Այնտեղ նպատակը Քրիստոսակերպությունն է: Նախասահմանության վերաբերյալ տե՛ս ավելի ամբողջական գրառումը Համատեքստային Հասկացություններ 1:1-23, Գ կետ ր 1:4, 1:5:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ, ՆԱԽԱՍԱՀՄԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՍՏՎԱԾԱԲԱՆԱԿԱՆ ԲԱԼԱՆՍԻ ԿԱՐԻՔԸ

SPECIAL TOPIC: ELECTION/PREDESTINATION AND THE NEED FOR A THEOLOGICAL BALANCE

Ընտրությունը հիանալի վարդապետություն է: Սակայն դա արտոնյալ լինելու կոչ չէ, այլ ուրիշների փրկության համար կապող օղակ, գործիք կամ միջոց լինելու կոչ: Հին Կտակարանում այս տերմինը հիմնականում կիրառվում էր ծառայության համար. Նոր Կտակարանում այն կիրառվում է հիմնականում փրկության համար, որի արդյունքը ծառայությունն է: Աստվածաշունչը երբեք չի հաշտեցնում Աստծո ինքնիշխանության և մարդու ազատ կամքի միջև առկա թվացյալ հակասությունը, այլ հաստատում է այդ երկուսն էլ: Աստվածաշնչյան այս լարվածության լավ օրինակ է Հռոմեացիների 9-րդ գլուխը՝ Աստծո ինքնիշխան ընտրության վերաբերյալ և Հռոմեացիների 10-րդ գլուխը՝ մարդկանց կողմից տրվող անհրաժեշտ պատասխանի վերաբերյալ (տես՝ Հռոմ.10:11,13):

Աստվածաբանական այս լարվածության գլխավոր կորիզը կարելի է գտնել Եփեսացիների 1:4-ում: Հիսուսը Աստծո ընտյալ մարդն է և բոլորն էլ պոտենցիալ առումով ընտրված են Նրանում (Կառլ Բարթ): Հիսուսն Աստծո «այո»-ն է ընկած մարդկության կարիքի համար (Կառլ Բարթ): Եփեսացիների 1:4 նաև օգնում է խնդիրը հստակեցնելու, հաստատելով, որ նախասահմանության նպատակը երկինքը չէ, այլ սրբությունը (Քրիստոսակերպությունը): Հաճախ մեզ գրավում են ավետարանի օգուտները և անտեսում ենք պատասխանատվությունները: Աստծո կանչը (ընտրությունը) այս ժամանակի, ինչպես նաև հավիտենության համար է:

Վարդապետությունները կապ են հաստատում այլ ճշմարտությունների հետ, որոնք ո՛չ մեկն են և ո՛չ էլ իրարից անկախ (տես՝ <u>ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՐԵՎԵԼՅԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ</u>): Գեղեցիկ նմանություն՝ անալոգիա կարող է հանդիսանալ օրինակ մի համաստեղությունն ու մի աստղը: Աստված ներկայացնում է ճշմարտությունը արևելյան՝ ոչ թե արևմտյան ժանրերում: Մենք չպետք է անտեսենք վարդապետական ճշմարտությունների բարբառային (պարադոքսալ) զույգերով պայմանավորված լարվածությունը՝

1. Նախասահմանությունը ի հակադրություն մարդու ազատ կամքի
2. Հավատացյալների վստահությունը ի հակադրությունը հարատևության անհրաժեշտության
3. Սկզբնական՝ բուն մեղքը ի հակադրություն գիտակցաբար կատարված մեղքի
4. Անմեղությունը (կատարելության ձգտումը) ի հակադրություն քիչ մեղանչելուն
5. Սկզբնական անմիջական արդարացումը և սրբացումը ի հակադրություն հետզհետե աճող սրբացման
6. Քրիստոնեական ազատությունը ի հակադրություն Քրիստոնեական պատասխանատվության
7. Աստծո գերազանցությունը ի հակադրություն Նրա ներունակության
8. Անճանաչելի Աստված ի հակադրություն Սուրբ Գրքով ճանաչելի դարձած Աստծո
9. Աստծո ներկայիս Արքայությունը ի հակադրություն ապագայի վախճանի
10. Ապաշխարությունը որպես Աստծո պարգև ի հակադրություն մարդու կողմից Աստծո ուխտի պատասխանի
11. Հիսուս Աստվածը ի հակադրություն Հիսուս մարդուն
12. Հիսուսը որպես Հորը հավասար մեկը ի հակադրություն Հիսուսը որպես Հորը ենթակա անձի:

«Ուխտի» աստվածաբանական հասկացությունը միավորում է Աստծո ինքնիշխանությունը (որը միշտ նախաձեռնողի դերում է և Ինքն է ծրագրում ապագան) մարդու կողմից պարտադիր հանդիսացող առաջին անգամ և ապա հարատևող հավատքի պատասխանի հետ (տես՝ Մարկ. 1:15; Գործք 3:16,19; 20:21, տե՛ս <u>ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՈՒԽՏ</u>): Զգուշացե՛ք պարադոքսի միայն մեկ կողմը դիտարկող և մյուս կողմերը անտեսող կամ թերագնահատող տեքստային ապացույցներից: Զգուշացե՛ք միայն ձեր նախընտրելի վարդապետությունը կամ աստվածաբանական համակարգը համոզելուց:

Տիտոս 2:11-ը հավասարակշռության մեջ է պահում ընտրության վերաբերյալ ՆԿ-յան մյուս խոսքերը: Կարծում եմ, որ աստվածաբանորեն օգտակար կարող է լինել ձեզ ներկայացնելու իմ գրառումները Հռոմ. 8:29-ից և գլուխ 9-ից, ինչպես նաև Եփեսացիների 1-ից:

I. Հռոմեացիների 8:29 – Պողոսը կիրառում է «նախապես իմանալ» (*proginōskō*, «նախորոք իմանալ») բայը երկու անգամ՝ այստեղ և 11:2-ում: Հռոմ. 11:2-ում այն վերաբերում է Իսրայելի հանդեպ Աստծո ուխտի սիրույն դեռևս նախքան ժամանակի գոյությունը: Հիշե՛ք, որ «իմանալ» տերմինը եբրայերենում կապված է մտերմիկ, անձնական փոխհարաբերության հետ, ոչ թե ինչ-որ մեկի վերաբերյալ փաստերի (տես՝ Ծնն. 4:1, Երեմ. 1:5): Այստեղ այն ներգրավված է հավիտենական իրադարձությունների մի շղթայում (տես՝ Հռոմ. 8:29-30): Այս տերմինը կապվեց նախասահմանության հետ: Սակայն, պետք է ասել, որ Աստծո կանխագիտությունը ընտրության հիմքը չէ, քանի որ, եթե այդպես լիներ, ապա ընտրությունը հիմնված կլիներ մեղավոր մարդկության տված հետագա պատասխանի

վրա, որը կլիներ մարդկային գործերը: Այս տերմինը կարելի է նաև գտնել Գործք 26:5, 1 Պետ. 1:2,20 և 2 Պետ. 3:17-ում:

Ա. «կանխավ իմացավ» (*proginōskō*, «նախորոք իմանալ»)

«Կանխավ իմանալ» և «նախասահմանել» տերմինները երկուսն էլ բաղադրյալ են «նախապես» կապով և հետևաբար պետք է թարգմանվեն «նախապես իմանալ», «նախապես նշել, ընտրել»: Նախասահմանության վերաբերյալ սահմանում տվող ՆԿ-յան հատվածները հետևյալն են՝ Հռոմ. 8:28-30, Եփես. 1:13-14 և Հռոմեացիների 9: Այս տեքստերը ակնհայտ կերպով շեշտում են, որ Աստված ինքնիշխան է: Նա է ամեն ինչի վրա կատարելապես վերահսկում: Գոյություն ունի նախագծված աստվածային ծրագիր, որը իրագործվում է ժամանակի մեջ: Սակայն այս ծրագիրը կամայական կամ հատընտիր չէ: Այն հիմնված է ոչ միայն Աստծո ինքնիշխանության կամ կանխագիտության վրա, այլ սիրո, ողորմության և շնորհքի Նրա անփոփոխ բնավորության վրա: Տես՝ <u>ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՀԱՎԻՏԵՆԱԿԱՆ ՓՐԿՈՒԹՅԱՆ ՅԱՀՎԵԻ ԾՐԱԳԻՐԸ:</u>

Մենք պետք է զգույշ լինենք մեր արևմտյան (ամերիկյան) անհատապաշտության կամ մեր ավետարանական նախանձախնդրության հանդեպ, որպեսզի չգունավորենք այս հիանալի ճշմարտությունը: Մենք նաև պետք է զգույշ լինենք Օգոստինոսի և Պելագիուսի կամ Կալվինիզմի և Հայկականության պատմական, աստվածաբանական բախումների պատճառով ծայրահեղությունների մեջ ընկնելուց:

Բ. «Նախասահմանված» (*proorizō*, «նախապես սահմաններ դնել»)

Նախասահմանությունը Աստծո սերը, շնորհքը և ողորմությունը սահմանափակելու նպատակով վարդապետություն չէ, ո՛չ էլ ինչ-որ մեկի ավետարանից զրկելու համար: Դրա նպատակն է հավատացյալներին զորացնելը, նրանց աշխարհայացքը ձևավորելը՝ ձուլելը: Աստված ամբողջ մարդկության կողմից է (տես՝ Հովհ. 1:12, 3:16, 1 Տիմ. 2:4, 2 Պետ. 3:9, 1 Հովհ. 2:2, 4:14): Աստված վերահսկում է ամեն ինչ: Ո՞վ կամ ի՞նչը կարող է մեզ բաժանել Նրանից (տես՝ Հռոմ. 8:31-39): Աստված ամբողջ պատմությունը դիտարկում է որպես ներկա. մարդիկ սահմանափակված են ժամանակով: Մեր հեռատեսությունը և մտավոր կարողությունները սահմանափակ են: Աստծո ինքնիշխանության և մարդու ազատ կամքի մեջ ոչ մի հակասություն չկա: Այն ուխտի ձև է: Սա ճշմարտության ևս մեկ օրինակ է, որը տրված է բարբառային լարվածությամբ: Սուրբգրային վարդապետությունները ներկայացվում են տարբեր տեսանկյուններից: Դրանք հաճախ լինում են պարադոքսային: Ճշմարտությունը թվացյալ հակասական զույգերի միջև հավասարաշռությունն է: Մենք այդ լարվածությունը չպետք է հեռացնենք ընտրելով ճշմարտություններից միայն մեկը: Մենք չպետք է առանձնացնենք որևէ սուրբգրային ճշմարտություն՝ այն առանձին «բաժանմունք», «կուպե» դարձնելով:

Նաև կարևոր է ավելացնել, որ ընտրության նպատակը միայն երկինքը չէ, երբ մենք մեռնենք, այլ հիմա Քրիստոսի պես լինելը (տես՝ Հռոմ. 8:29-30, 2 Կորնթ. 3:18, Գաղ. 4:19, Եփես. 1:4, 2:10, 4:13, 1 Թեսաղ. 3:13, 4:3, 5:23, 2 Թեսաղ. 2:13, Տիտոս 2:14, 1 Պետ. 1:15): Մենք ընտրվել ենք «սուրբ և անարատ» լինելու: Աստված ընտրում է մեզ փոխելու համար, որպեսզի ուրիշները կարողանան տեսնել փոփոխությունը և հավատքով պատասխանեն Աստծուն՝ Քրիստոսի միջոցով: Նախասահմանությունը անձնական առանձնաշնորհում չէ, այլ ուխտի պարտավորություն: Սա է այս խոսքի կարևորագույն ճշմարտությունը: Սա է Քրիստոնեության նպատակը: Սրբությունը Աստծո կամքն է յուրաքանչյուր հավատացյալի համար: Աստծո ընտրությունը Քրիստոսին նմանվելու համար է (տես՝ Եփես. 1:4), ոչ թե հատուկ դիրք՝ պաշտոն: Աստծո պատկերը, որը մարդուն էր տրվել ստեղծագործության ժամանակ (տես՝ Ծննդ. 1:26, 5:1,3, 9:6) պետք է վերականգնվի:

Գ. «Նրա Որդու պատկերին նմանվելով» - Աստծո վերջնական նպատակը Անկման ժամանակ մարդու կորցրած Աստծո պատկերը վերականգնելն է: Հավատացյալները նախապես կարգված են լինելու Քրիստոսի նման (տես՝ Եփես. 1:4):

II. Հռոմեացիների 9

Ա. Հռոմեացիների 9-րդ գլուխը ՆԿ-ի ամենահզոր հատվածներից է Աստծո ինքնիշխանության վերաբերյալ (մյուսը՝ Եփես. 1:3-14), մինչդեռ 10-րդ գլուխը հստակ և անընդմեջ սահմանում է մարդու ազատ կամքը (տես՝ «յուրաքանչյուր ոք» Հռոմ. 9:4, «ով որ» 9:11,13, «բոլորը» 9:12 /երկու անգամ/): Պողոսը երբեք չի փորձում հաշտեցնել այս աստվածաբանական լարվածությունը: Դրանք երկուսն էլ ճիշտ են: Աստվածաշնչյան շատ վարդապետություններ ներկայացվում են պարադոքսալ լամ բարբառային զույգերով: Աստվածաբանության շատ համակարգեր տրամաբանական կես-ճշմարտություններ են: Օգոստինյանիզմը և Կալվինիզմը ի դեմս կիսա-Պելագիանիզմի և Արմենիանիզմի, ունեն ճշմարտության և սխալների տարրեր: Վարդապետությունների միջև աստվածաշնչյան լարվածությունը նախընտրելի է տեքստային ապացույցով, դոգմատիկ, տրամաբանական, աստվածաբանական համակարգի համար, որը հարկադրում է Աստվածաշունչը կանխամտածված մեկնաբանական ցանցի ներսում:

Բ. Այս նույն ճշմարտությունը (որը գտնվում է Հռոմ. 9:23-ում) սահմանվում է Հռոմ. 8:29-30 և Եփես. 1:4,11-ում: Այս գլուխը ՆԿ-ում Աստծո ինքնիշխանության ամենահզոր արտահայտությունն է: Ոչ մի վիճաբանություն չի կարող լինել այն հարցում, որ Աստված կատարելապես վերահսկում է ստեղծագործությունը և փրկագործությունը: Այս մեծ ճշմարտությունը պետք չէ, որ երբևէ փափկեցվի կամ թերի ներկայացվի: Սակայն, այն պետք է հավասարակշռության մեջ բերել Աստծո ուխտի ընտրության հետ, որը Իր պատկերով մարդ արարածի հետ կապ հաստատելու միջոց է: Անշուշտ ճիշտ է, որ որոշ ՀԿ-յան ուխտեր՝ ինչպես օրինակ Ծննդոց 15, անպայմանական են և կապ չունեն ընդհանրապես մարդու պատասխանի հետ, սակայն այլ ուխտեր պայմանական են՝ կախված մարդու պատասխանից (օրինակ՝ Եդեմի, Նոյի, Մովսեսի, Դավթի ուխտերը): Աստված փրկության ծրագիր ունի Իր ստեղծագործության համար .ոչ մի մարդ չի կարող ազդել այս ծրագրի վրա: Աստված ընտրել է թույլատրելու որոշ անհատների մաս կազմելու Իր ծրագրերի մեջ: Մասնակցության այս հնարավորությունը աստվածաբանական լարվածություն է Աստծո ինքնիշխանության (Հռոմեացիների 9) և մարդու ազատ կամքի (Հռոմեացիների 10) միջև:

Տեղին չէ ընտրել միայն մեկ սուրբգրային շեշտադրություն և անտեսել մյուսը: Վարդապետությունների միջև լարվածություն կա, քանի որ արևելյան ժողովուրդները ներկայացնում են ճշմարտությունը բարբառային կամ խսիտ լարված զույգերի միջոցով: Վարդապետությունները պետք է պահեն իրար մեջ կապը: Ճշմարտությունը մի ամբողջ ճշմարտությունների խճանկար է (մոզայկա):

III. Եփեսացիների 1

Ա. Ընտրությունը հրաշալի վարդապետություն է: Սակայն այն խտրականության կոչ չէ, այլ կոչ ուրիշների փրկության համար որպես անոթ, գործիք կամ միջոց լինելու: Հին Կտակարանում այս տերմինը գործածվում էր հիմնականում ծառայության համար. Նոր Կտակարանում գործածվում է հիմնականում փրկության համար, որի հետևանքը ծառայությունն է: Աստվածաշունչը երբեք էլ չի հաշտեցնում Աստծո ինքնիշխանության և մարդու ազատ կամքի միջև առկա թվացյալ հակասությունը, այլ հաստատում է երկուսն էլ: Սուրբգրային այդպիսի լարվածության մի գեղեցիկ օրինակ կարող է հանդիսանալ Հռոմեացիների 9-րդ գլուխը՝ Աստծո ինքնիշխան ընտրության վերաբերյալ և Հռոմեացիների 10-րդ գլուխը՝ մարդկության կողմից անհրաժեշտաբար տրվող պատասխանի վերաբերյալ (տես՝ Եփես. 10:9,11-13):

Աստվածաբանական այս լարվածության գլխավոր բանալին կարելի է գտնել Եփ. 1:4-ում: Հիսուսը Աստծո ընտրյալ մարդն էր և բոլորը պոտենցիալ ընտրյալներ են Նրա մեջ (Կարլ Բարթ / Karl Barth): Հիսուսը Աստծո «այո»-ն է մեղավոր մարդկության կարիքին (Կարլ Բարթ): Եփեսացիների 1:4-ը նաև օգնում է հստակեցնել այս խնդիրը հաստատելով, որ նախասահմանության նպատակը երկինքը չէ, այլ սրբությունը (Քրիստոսակերպությունը): Մեզ հաճախ գրավում է ավետարանի օգուտները և անտեսում ենք պատասխանատվությունները: Աստծո կանչը (ընտրությունը) թե՛ ժամանակի և թե՛ հավիտենության համար է:

Վարդապետությունները առնչվում են այլ ճշմարտությունների հետ, որոնք միակը չեն, և նույն թեմայի մեջ են: Գեղեցիկ անալոգիա կարող է հանդիսանալ մի մեծ համաստեղությունը հակադրված մի աստղի հետ: Աստված ճշմարտությունը ներկայացնում է արևելյան, ոչ թե արևմտյան ժանրերում: Մենք չպետք է անտեսենք վարդապետական ճշմարտությունների բարբառային (պարադոքսալ) զույգերի կողմից հարուցված լարվածությունը (Օրինակ՝ Տրանսցենդենտ՝ մշատագո Աստված ի հակադրություն ներունակ Աստծո. Քրիստոնեական ազատությունը ի հակադրություն Քրիստոնեական պատասխանատվության՝ ուխտի զուգընկերոջ հանդեպ, և այլն):

«Ուխտի» աստվածաբանական հասկացությունը միավորում է Աստծո ինքնիշխանությունը (որը միշտ նախաձեռնողն է և օրակարգը կազմողը) մարդու կողմից պարտադիր սկզբնական և ապա շարունակելի զոջման հավատքով պատասխանի հետ: Զգո՛ւյշ եղեք պարադոքսի միայն մեկ կողմի համար տեքստային ապացույց ներկայացնելուց և մյուս կողմը թերագնահատելուց: Զգո՛ւյշ եղեք միայն ձեր նախընտրելի վարդապետությունը կամ աստվածաբանության համակարգը պաշտպանելուց:

Բ. «Նա ընտրեց մեզ» - Սա անորոշ կատարյալ չեզոք սեռի սահմանական եղանակ է, որը շեշտադրում է ենթակայի վճռական որոշումը՝ ընտրությունը: Այն հատուկ ուշադրություն է սևեռում ժամանակից առաջ Հոր ընտրության վրա: Աստծո ընտրությունը չպետք է հասկանալ իսլամական վճռականության, ո՛չ էլ ուլտրակալվինիստական «Աստված ընտրում է մի քանիսին ի հակադրություն Աստված չի ընտրում մյուսներին» իմաստով, այլ ուխտի՝ պայմանագրի իմաստով: Աստված խոստացավ փրկել մեղավոր մարդկությանը (տես՝ Ծնն. 3:15): Աստված կանչեց և ընտրեց Աբրահամին՝ ընտրելով ամբողջ մարդկությանը (տես՝ Ծնն. 12:3, Ելից 19:5-6): Աստված Ինքն է ընտրում յուրաքանչյուր մարդու, ով հավատք է դրսևորում Քրիստոսի հանդեպ: Աստված փրկության հարցում միշտ Ինքն է նախաձեռնողը (տես՝ Հովհ. 6:44, 65): Այս տեքստը և Հռոմ. 8:28-30, 9:1-33 նախասահմանության վարդապետության համար հիմնական ՆԿ-յան տեքստերն են, որոնք շեշտադրվել են Օգոստինոսի և Կալվինի կողմից:

Աստված ընտրել է հավատացյալներին ոչ միայն փրկության (արդարացման) համար, այլ նաև սրբացման (տես՝ Կող. 1:10-12): Սա կարող է վերաբերել՝ (1) Քրիստոսում մեր ունեցած դիրքին (տես՝ 2 Կորնթ. 5:21), (2) Աստծո փափագին՝ Իր որդիների կյանքում Իր բնավորության վերարտադրման համար (տես՝ Եփես. 2:10, Հռոմ. 8:28-29, Գաղ. 4:19): Աստծո կամքն է Իր որդիների համար մի օր թե՛ Երկինքը, և թե՛ այսօր Քրիստոսին նմանվելը:

«Նրա մեջ» խոսքը Եփես. 1:4-ի բանալի հանդիսացող հասկացությունն է: Հոր օրհնությունները, շնորհքը և փրկությունը հոսում են Քրիստոսի միջոցով (տես՝ Հովհ. 14:6): Ուշադրություն դարձրեք այս քերականական կազմության կրկնություններին (տեղի պարագայով) Եփես. 1:3-ում՝ «Քրիստոսի մեջ», Եփես. 1:4-ում՝ «Նրա մեջ», Եփես. 1:7-ում՝ «Նրա մեջ», Եփես. 1:9-ում՝ «Նրա մեջ», Եփես. 1:10-ում՝ «Քրիստոսի մեջ», «Նրա մեջ», Եփես. 1:12-ում՝ «Քրիստոսի մեջ» և Եփես. 1:13-ում՝ «Նրա մեջ» (երկու անգամ): Հիսուսը Աստծո «այո»-ն է մեղավոր մարդկությանը (Կարլ Բարթ):

Հիսուսը ընտրյալն է, Ում մեջ բոլորն են պոտենցիալ ընտրյալներ (տես՝ Հովհ. 3:16): Հայր Աստծո բոլոր օրհնությունները հոսում են Քրիստոսի միջոցով:

«Աշխարհի հիմնումից առաջ» արտահայտությունը նաև կիրառվում է Մատթ. 25:34, Հովհ. 17:24, 1 Պետ. 1:19-20 և Հայտն. 13:8-ում: Այն ցույց է տալիս Երրորդության Աստծո փրկության համար գործողությունները նույնիսկ նախքան Ծննդոց 1:1-ը: Մարդիկ սահմանափակ են իրենց ժամանակի զգացողությամբ. մեր համար ամեն ինչ անցյալ է, ներկա կամ ապագա, բայց ո՛չ Աստծո համար:

Նախասահմանության նպատակը սրբությունն է, ոչ թե արտոնությունը: Աստծո կանչը Ադամի մի քանի ընտրյալ երեխաների համար չէր, այլ բոլորի: Այն կանչ է բոլորի համար լինելու այն, ինչ Աստված մտադիր էր մարդկության համար լինելու՝ Իր պես (տես՝ 1 Թեսաղ. 5:23, 2 Թեսաղ. 2:13), Իր պատկերի պես (տես՝ Ծնն. 1:26-27): Ողբերգություն է նախասահմանությունը սրբության կյանքի փոխարեն աստվածաբանական սկզբունքի վերածելը: Հաճախ մեր նախընտրելի աստվածաբանությունը ավելի բարձր է խոսում, քան սուրբգրային տեքստերը:

«Անարատ» (*amōmos*) կամ «արատներից զուրկ» տերմինը կիրառվում է՝

1. Հիսուսի համար (տես՝ Եբր. 9:14, 1 Պետ. 1:19)
2. Զաքարիայի և Եղիսաբեթի համար (տես՝ Ղուկ. 1:6)
3. Պողոսի համար (տես՝ Փիլ. 3:6)
4. բոլոր ճշմարիտ Քրիստոնյաների համար (տես՝ Փիլ. 2:15, 1 Թեսաղ. 3:13, 5:23):

Աստծո անդրդվելի կամքը յուրաքանչյուր հավատացյալի համար ոչ միայն ապագայում երկինքն է, այլ հիմա Քրիստոսին նմանվելը (տես՝ Հռոմ. 8:29-30, Գաղ. 4:19, 1 Պետ. 1:15): Հավատացյալները պետք է արտացոլեն Աստծո բնավորության գծերը այս մեղավոր աշխարհին՝ ավետարանչության նպատակով: Քերականորեն «սիրո մեջ» արտահայտությունը Տիտոս 2:2-ում կարող էր համապատասխանել Տիտոս 2:4-ի կամ 5-ի հետ, սակայն երբ այս արտահայտությունը գործածվում է Եփեսացիների թղթի այլ հատվածներում, այն մշտապես վերաբերում է Աստծո հանդեպ մարդկային սիրույն (տես՝ Եփես. 3:17, 4:2,15,16):

Գ. Եփես. 1:5-ում «Նա մեզ նախասահմանեց» արտահայտությունը ԱՆՈՐՈՇ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ԴԵՐԲԱՑ է: Այս հունարեն տերմինը բաղադրյալ կազմություն ունի՝ «նախքան» (*pro*) և «նշել» (*horizō*) բառերից: Այն վերաբերում է Աստծո կանխորոշված փրկագործության ծրագրին (տես՝ Ղուկ. 22:22, Գործք 2:23, 4:28, 17:31, Հռոմ. 8:29-30): Նախասահմանությունը մի քանի ճշմարտություններից մեկն է, որը կապ ունի մարդկության փրկության հետ: Այն իրար հետ կապված մի շարք աստվածաբանական ճշմարտությունների մաս է կազմում: Այն երբեք էլ նախատեսված չի եղել առանձնացվելու: Աստվածաշնչյան ճշմարտությունը տրվում է լարվածությամբ լի, պարադոքսալ զույգերի շարքերի տեսքով: Հարանվանությունների առաջացումը պատճառ հանդիսացավ շեշտադրելու այս դիալեկտիկ ճշմարտություններից միայն մեկը (նախասահմանությունը հակադրված մարդու ազատ կամքին, հավատացյալի երաշխիքը հակադրված սրբերի հարատևությանը, առաջին մեղքը հակադրված գիտակցված մեղքին, անմեղությունը հակադրված քիչ մեղանչելուն, անմիջապես հռչակված արդարացումը հակադրված հետզհետե ձեռք բերված սրբագործմանը, հավատքը հակադրված գործերի հետ, Քրիստոնեական ազատությունը հակադրված Քրիստոնեական պատասխանատվությանը, գերբնականը հակադրված իրողությանը):

Աստծո ընտրությունը հիմնված չէ մարդու գործերի կանխագիտության վրա, այլ Իր գթառատության (տես՝ Եփես. 1:7,9,11): Նա ցանկանում է, որ բոլորը (ոչ թե միայն յուրահատուկ մարդիկ, ինչպես օրինակ Գնոստիկներն են կամ մերօրյա ուլտրա-կալվինիստները) փրկվեն (տես՝ Եզեկ. 18:21-23,32, Հովհ. 3:16-17, 1 Տիմ. 2:4; 4:10; Տիտոս 2:11; 2 Պետ. 3:9; 1 Հովհ. 2:2; 4:14): Աստծո շնորհքը (Աստծո բնավորությունը) այս հատվածի աստվածաբանական բանալին է (տես՝ Եփես. 1:6ա, 7գ, 9բ), ինչպես որ

Աստծո ողորմությունը նախասահմանության վերաբերյալ այլ հատվածների բանալին է, Հռոմեացիների 9-11:

Մեղավոր մարդկության միակ հույսը Աստծո շնորհքն ու ողորմությունն է (տես՝ Եսայի 53:6 և մի քանի այլ ՀԿ-յան տեքստեր, որոնք մեջբերված են Հռոմ. 3:9-18-ում): Այս առաջին աստվածաբանական գլուխները մեկնաբանելիս շատ կարևոր է հասկանալ, որ Պողոսը շեշտադրում է այն բաները, որոնք ընդհանրապես կապ չունեն մարդկային գործերի հետ՝ նախասահմանությունը (Եփեսացիների 1), շնորհքը (Եփեսացիների 2), և փրկագործության Աստծո հավիտենական ծրագիրը (առեղծված՝ խորհուրդ, Եփես. 2:11-3:13): Սա սուտ վարդապետների կողմից մարդու արժանիքների և հպարտության վրա դրած շեշտադրումները հակակշռելու համար էր:

1:12 «մենք» Սա վերաբերում է հավատացյալ հրեաներին (տես՝ Հռոմ. 1:16):

❖ **«փառք»** Տե՛ս Եփես. 1:6-ի գրառումը:

1:13 «դուք» Սա վերաբերում է հավատացյալ հեթանոսներին (տես՝ Եփես. 2:12):

❖ **«երբ լսեցիք ճշմարտության խոսքը... Ավետարանը, Ում հավատալուց հետո»** Սրանք երկուսն էլ անորոշ կատարյալ ներգործական դերբայներ են: Փրկությունը թե՛ պատգամ է, որին պետք է հավատալ և թե՛ անձ, որին պետք է վստահել: Դրա համար անհրաժեշտ է թե՛ մտքով ընդունել Աստվածաշնչի ճշմարտացիությունը (աշխարհայացքը) և թե՛ անձնապես Հիսուսին ընդունելը: Ավետարանը պետք է անձնապես ընդունվի (տես՝ Հովհ. 1:12, 3:16,18,36, 6:40, 11:25-26, Հռոմ. 10:9-13): Ավետարանի էությունը կարելի է ամփոփել որպես՝

1. անձ, որին ընդունում ես (անձնական փոխհարաբերությունը)
2. ճշմարտություններ այդ անձի վերաբերյալ (աշխարհայացքը)
3. այդ անձի պես ապրելակերպ (Քրիստոսակերպությունը)

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. «ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ» ՊՈՂՈՍԻ ԹՂԹԵՐՈՒՄ
SPECIAL TOPIC: "TRUTH" IN PAUL'S WRITINGS

Այս տերմինի և դրա հետ կապ ունեցող ձևերի կիրառությունները Պողոսի կողմից սկիզբ են առնում դրա ՀԿ-յան համարժեքից՝ *emet,* որը նշանակում է վստահելի կամ հավատարիմ (BDB 53, տես՝ Հատուկ Թեմա. Հավատալը, վստահելը, հավատքը և հավատարմությունը ՀԿ-ում): Միջանկյալ սուրբգրային հրեական գրքերում այն կիրառվում էր ճշմարտության համար ի հակադրություն կեղծիքի՝ ստության: Հնարավոր է ամենասերտ համազորը լինի Մեռյալ Ծովի Գալարների «Գոհության օրհներգությունները», որտեղ այն գործածվում է հայտնված վարդապետությունների համար: Էսսեների համայնքի անդամները դարձան «ճշմարտության վկաներ»:

Պողոսն այս տերմինը կիրառում է Հիսուս Քրիստոսի ավետարանը նկատի ունենալու կերպ՝

1. Հռոմեացիների 1:18,25, 2:8,20, 3:7, 15:8
2. 1 Կորնթացիների 13:6
3. 2 Կորնթացիների 4:2, 6:7, 11:10, 13:8
4. Գաղատացիների 2:5,14, 5:7
5. Եփեսացիների 1:13, 6:14
6. Կողոսացիների 1:5,6
7. 2 Թեսաղոնիկեցիների 2:10,12,13
8. 1 Տիմոթեոս 2:4, 3:15, 4:3, 6:5
9. 2 Տիմոթեոս 2:15,18,25, 3:7,8, 4:4
10. Տիտոս 1:1,14

Պողոսն այս տերմինը նաև գործածում է իր խոսքը որպես վստահելի՝ ճիշտ արտահայտելու կերպ՝

1. Գործք 26:25
2. Հռոմեացիների 9:1
3. 2 Կորնթացիների 7:14, 12:6
4. Եփեսացիների 4:25
5. Փիլիպպեցիների 1:18
6. 1 Տիմոթեոս 2:7

Նա նաև գործածում է այս տերմինը, որպեսզի նկարագրի իր շարժառիթները 1 Կորնթ. 5:8-ում և ապրելակերպը (նաև բոլոր Քրիստոնյաների համար) Եփես. 4:24, 5:9, Փիլ. 4:8-ում: Երբեմն նա կիրառում է դա մարդկանց համար:

1. Աստված՝ Հռոմ. 3:4 (տես՝ Հովհ. 3:33, 17:17)
2. Հիսուս՝ Եփես. 4:21 (նման է Հովհ. 14:6-ին)
3. Առաքելական վկաներ՝ Տիտոս 1:13
4. Պողոսը, 2 Կորնթ. 6:8

Պողոսը օգտագործում է ԲԱՅԻ ձևը (այսինքն՝ *alētheuō*) միայն Գաղ. 4:16 և Եփես. 4:15-ում, որտեղ այն վերաբերում է ավետարանին: Ավելի շատ ուսումնասիրությունների համար կարդացե՛ք Քոլին Բրաունի (խմբ.), *Նոր Կտակարանի Աստվածաբանության Նոր Միջազգային Բառարան*, հատոր 3, էջ՝ 784-902 (Colin Brown, *The New International Dictionary of New Testament Theology*):

❖ **«կնքվեցիք»** Հունահռոմեական մշակույթում կնքելը անվտանգության, իսկության և սեփականության նշան էր (տես՝ Եփես. 4:30, 2 Կորնթ. 1:22, 5:5, Հայտն. 7:1-4): Այս կնքելը (անորոշ կատարյալ կրավորական սահմանական) աստվածաբանորեն համազոր է Քրիստոսի մեջ նոր հավատացյալների մկրտությանը (տես՝ 1 Կորնթ. 12:13, հավանաբար Եփես. 4:4-5):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԿՆԻՔ
SPECIAL TOPIC: SEAL

Կնիքը հնարավոր է եղել է հնագույն մի միջոց, որով ցույց են տվել՝

1. ճշմարտություն (տես՝ Հովհ. 3:33)
2. սեփականություն (տես՝ Հովհ. 6:27, 2 Տիմ. 2:19, Հայտն. 7:2-3, 9:4)
3. անվտանգություն կամ պաշտպանություն (տես՝ Ծնող. 4:15, Մատթ. 27:66, Հռոմ. 4:11, 15:28, 2 Կորնթ. 1:22, Եփես. 1:13, 4:30, Հայտն. 20:3)
4. հնարավոր է նաև եղել է Աստծո պարգևի խոստման իրողության նշան (տես՝ Հռոմ. 4:11 և 1 Կորնթ. 9:2):

Հայտնություն 7:2-4, 9:4-ում այս կնիքի նպատակն էր Աստծո ժողովրդին առանձնացնելը, որպեսզի Աստծո բարկությունը չթափվի նրանց վրա: Սատանայի կնիքը առանձնացնում է իր ժողովրդին, որոնք Աստծո բարկության առարկա են: Հայտնության մեջ «նեղություն» (այսինքն՝ *thlipsis*) բառը միշտ վերաբերում է անհավատների կողմից հավատացյալների հալածանքին, մինչդեռ բարկությունը՝ ցասումը (այսինքն՝ *orgē* կամ *thumos*) միշտ Աստծո դատաստանն է անհավատների վրա, որպեսզի ապաշխարեն և հավատան Քրիստոսին: Դատաստանի այս դրական նպատակը կարելի է տեսնել Ղևտացիների 26-ի, 2 Օրինաց 27-28, 30, Սաղմոս 1-ի անեծքների, օրհնությունների ուխտի մեջ:

❖ **«խոստման Սուրբ Հոգով»** Սուրբ Հոգու գալուստը եղավ Նոր Դարաշրջանի նշանը (տես՝ Հովել 2:28, Հովհ. 14:26գ): Նա Հոր խոստումն էր (տես՝ Հովհ. 14:16, 26, 15:26, Գործք 1:4-5, 2:33): Հավատացյալների մեջ Հոգու ներբնակեցումը նրանց հարության երաշխիքն է (տես՝ Հռոմ. 8:9-11):

1:14 «Ով մեր գրավականն է» Գրավի հասկացությունն ունի ՀԿ-յան նախատիպ՝

1. պարտքը վճարելու խոստում (տես՝ Ծնն. 38:17, 18, 20, 2 Օրինաց 24:10-13)
2. կենսական կարիքներն ապահովելու խոստում (տես՝ 1 Թագ. 17:18)
3. անձնական խոստում (տես՝ 4 Թագ. 18:23, Եսայի 36:8)

Հունարեն այս տերմինը վերաբերում է «կանխավճարին» (տես՝ 2 Կորնթ. 1:22, 5:5): Ժամանակակից հունարենում այն կիրառվում է նշանադրության մատանուն, որը գալիք ամուսնության խոստումն է: Հոգին արդարության նոր դարաշրջանի սիրականացված խոստումն է: Սա հանդիսանում է ՆԿ-ի լարվածության «արդեն» և «դեռ ոչ»-ի մի մասը, որը Քրիստոսի երկու գալուստների շնորհիվ միաձուլում է հրեական երկու դարաշրջանները (տես՝ *Ինչպես Կարդալ Աստվածաշունչը Իր ամբողջ Իմաստով* Ֆիի և Սթյուարթ, էջ՝ 129-134 /*How to Read The Bible for All Its Worth* by Fee and Stuart/): Սուրբ Հոգին գրավական է, որ տրվել է հիմա՝ ապագա վախճանի համար:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՀՈԳՈՒ ԱՆՁ ԼԻՆԵԼԸ
SPECIAL TOPIC: THE PERSONHOOD OF THE SPIRIT

Ա. Հին Կտակարան

ՀԿ-ում «Աստծո Հոգին» (այսինքն՝ *ruach*) մի ուժ էր, որը իրականացնում էր ՅԱՀՎԵի նպատակը (տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՀՈԳԻՆ ԱՍՏՎԱԾԱՇՆՉՈՒՄ), I, սակայն մի փոքր ակնարկ կա, որ նա անձնավորություն է (տես՝ Եսայի 48:16, 61:1):

Բ. Նոր Կտակարան

Սակայն ՆԿ-ում (տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՀՈԳԻՆ ԱՍՏՎԱԾԱՇՆՉՈՒՄ), II, III, IV, հայտնվում է Սուրբ Հոգու լիակատար անձ լինելը և անձնավորության էությունը՝

1. Նա կարող է հայհոյվել (տես՝ Մատթ. 12:31, Մարկ. 3:29)
2. Նա սովորեցնում է (տես՝ Ղուկ. 12:12, Հովհ. 14:26)
3. Նա վկայություն է տալիս (տես՝ Հովհ. 15:26)
4. Նա համոզում է, առաջնորդում է (տես՝ Հովհ. 16:7-15)
5. Նա կոչվում է «ով» (այսինքն՝ *hos*, տես՝ Եփես. 1:14)
6. Նա կարող է վշտանալ (տես՝ Եփես. 4:30)
7. Նա կարող է մարել (տես՝ 1 Թեսաղ. 5:19)
8. Նրան կարող են հակառակվել (տես՝ Գործք 7:51)
9. Նա պաշտպանում է հավատացյալներին (տես՝ Հովհ. 14:26, 15:26, 16:7)
10. Նա փառավորում է Որդուն (տես՝ Հովհ. 16:14)

Երրորդության վերաբերյալ տեքստերը (այստեղ տրված են շատ հատվածներից միայն երեքը, ամբողջական ցանկը կարող եք գտնել ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԵՐՐՈՐԴՈՒԹՅՈՒՆ) նույնպես խոսում է երեք անձի մասին՝

1. Մատթ. 28:19
2. 2 Կորնթ. 13:14
3. 1 Պետ. 1:2

«Հոգի» հունարեն բառը (*pneuma*) ՉԵՁՈՔ է, երբ վերաբերում է Հոգուն, սակայն ՆԿ-ը հաճախ է գործածում ԱՐԱԿԱՆ ՑՈՒՑԱԿԱՆ ԱԾԱԿԱՆԸ մատնացույց անելու, որ խոսքը վերաբերում է անձի (այսինքն՝ Հովհ. 16:8, 13-14)

Հոգին կապված է մարդկային գործունեության հետ՝

1. Գործք 15:28
2. Հռոմ. 8:26
3. 1 Կորնթ. 12:11
4. Եփես. 4:30

Գ. Գործքը՝

Գործք Առաքելոցի հենց սկզբում շեշտադրվում է Հոգու դերը (ինչպես Հովհաննեսի Ավետարանում): Պենտեկոստեն՝ Հոգեգալուստը, Սուրբ Հոգու գործունեության սկիզբը չէր, այլ մի նոր գլուխ էր՝ մի նոր սկիզբ: Հիսուսը միշտ ուներ Հոգուն: Նրա մկրտությունը Հոգու գործի սկիզբը չէր, այլ նոր գլուխ էր: Հոգին Հոր նպատակի համար արդյունավետ միջոց է, որպեսզի Իր պատկերով ստեղծված ամբողջ մարդկությանը վերականգնի (տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՅԱՀՎԵԻ ՀԱՎԻՏԵՆԱԿԱՆ ՓՐԿՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ): Սա Հոգու՝ Երրորդության երրորդ Անձի դարաշրջանն է:

Դ. Աստվածաբանական զարգացումը

Երրորդությունը պատմականորեն ձևավորված բանաձև է՝ տեղեկացված աստվածաշնչյան նյութերով:

1. Հիսուսի լիակատար Աստվածությունը՝ Հորը համահավասար, հաստատվել է մ.թ. 325թ-ին Նիկիայի Խորհրդի ժամանակ (տես՝ Հովհ.1:1, Փիլ.2:6, Տիտոս 2:13):
2. Հոգու լիակատար անձ լինելը և Աստվածությունը՝ համահավասար Հորը և Որդուն, հաստատվել է մ.թ.381թ-ին՝ Կոստանդնուպոլիսի Խորհրդի ժամանակ
3. Երրորդության վարդապետությունը ամբողջությամբ արտահայտվել է Օգոստինոսի աշխատության մեջ, որը կոչվում է De Trinitate: Իրոք առեղծվածային է սա: Սակայն ՆԿ-ը հաստատում է մեկ աստվածային էություն (տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՄԻԱՍՏՎԱԾՈՒԹՅՈՒՆ) երեք հավիտենական անձերի արտահայտմամբ՝ դրսևորմամբ (Հայրը, Որդին և Սուրբ Հոգին, տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԵՐՐՈՐԴՈՒԹՅՈՒՆ):

❖ **«փրկություն»** Տե՛ս Եփես.1:7-ի գրառումը և Հատուկ Թեմա Կող.1:14-ում:

❖ **«Աստծո սեփականություն»** Սա հնարավոր է Ելից 19:5, 2 Օրինաց 7:6, 14:2 խոսքերի ակնարկ է: Հրեաները Աստծո հատուկ գանձն էին աշխարհին ձեռք մեկնելու՝ փրկելու նպատակով (տես՝ Ծնն.12:3, Ելից 19:6), այժմ Նրա գործը կատարողը եկեղեցին է՝ Քրիստոսի մարմինը:

❖ **«ի գովություն Նրա փառքի»** Տե՛ս Եփես.1:6-ի գրառումը:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ԵՓԵՍԱՑԻՆԵՐԻ 1:15-23

15Այդ պատճառով, ես էլ, Տեր Հիսուս Քրիստոսի հանդեպ ունեցած ձեր հավատի և բոլոր սրբերի նկատմամբ ունեցած ձեր սիրո մասին լսելով, 16չեմ դադարում ձեզ համար գոհանալուց, ձեզ իմ աղոթքների մեջ հիշելով, 17որ մեր Տեր Հիսուս Քրիստոսի Աստվածը, փառքի Հայրը ձեզ իմաստության և հայտնության հոգի տա Իրեն ճանաչելու համար. 18որ ձեր հասկացողության աչքերը լուսավորվելով՝ իմանաք, թե ի՛նչ է Նրա կոչման հույսը, և ի՛նչ է Իր ժառանգության փառքի հարստությունը սրբերի մեջ, 19և ի՛նչ է Նրա զորության գերազանց մեծությունը մեր՝ հավատացյալներիս նկատմամբ Իր հզոր ուժի գործադրությամբ, 20որ Նա գործադրեց Քրիստոսի մեջ, երբ Նրան մեռելներից հարուցանեց ու Իր աջ կողմում նստեցրեց երկնային տեղերում, 21շատ ավելի բարձր, քան ամեն մի իշխանություն ու զորություն, և կարողություն ու տերություն, ամեն մի անունից վեր, որ անվանվում է ո՛չ միայն այս աշխարհում, այլ նաև՝ գալիք. 22և ամեն ինչ հնազանդեցրեց Նրա ոտքերի տակ և Նրան տվեց ամեն ին

չի վրա եկեղեցու գլուխ լինել, 23որ Նրա մարմինն է, Նրա լրումը, Ով լցնում է ամենն ամենի մեջ:

1:15-23 Սա Պողոսի գոհության և բարեխոսական աղոթքն է նամակը ստացողների համար (այսինքն՝ Փոքր Ասիայի եկեղեցիները): Հունարենում սա մի երկար նախադասություն է, ինչպես Եփես.1:3-14-

ը (այսինքն՝ Պողոսի Հայր Աստծուն ուղղված փառաբանության աղոթքը, որ Իր գթառատությամբ մեզ պարգևեց Քրիստոսին և Հոգուն): Այս երկար նախադասությունները բնորոշ են Պողոսի գրական ոճին միայն Եփեսացիների թղթում (տես՝ եփես. 1:3-14, 15-23, 2:1-10, 14-18, 19-22, 3:1-12, 14-19, 4:11-16, 6:13-20):

Նաև ուշադրություն դարձրե՛ք Եփես. 6:19-20-ում ինչպես է Պողոսն աղոթում իր համար: Պողոսը աղոթքի և փառաբանության մարդ էր (այսինքն՝ 3:20-21):

1:15

NASB	**«հավատքը... ձեր մեջ»**
NKJV, NRSV, TEV, NJB	**«ձեր հավատքը»**

Եփեսացիներին ուղղված թուղթը, լինելով շրջանառվող նամակ, ցույց է տալիս, որ Պողոսը դիմում է մի քանի եկեղեցիների, և ոչ թե միայն Եփեսոսում գտնվող եկեղեցուն: Նա լսել էր Լիկուս Հարթավայրում (Լավոդիկե, Երապոլիս, Կողոսիա) գտնվող եկեղեցիների խնդիրների մասին Եպափրասի միջոցով (տես՝ Կող. 1:6-8):

«Հավատք» տերմինը կարող է վերաբերել՝

1. Քրիստոսի վրա սկզբնական հավատքի, վստահության դրսևորմանը (տես՝ Եփես. 1:19՝ «մեր՝ հավատացյալներիս նկատմամբ»)
2. հարատև հավատարիմ Քրիստոնեական կյանքը (այսինքն՝ ՀԿ իմաստով, և Կող. 1:9-10)
3. Քրիստոնեական «հավատքը» վարդապետությունը՝ հստակ հավատքի առարկայով (տես՝ Գործք 6:7, 13:8, 14:22, Գաղ. 1:23, 6:10, Հուդա 3,20):

Այստեղ առարկան առկա է և հավանաբար տարբերակ #3-ը ամենահարմարն է:

❖ **«ձեր սերը»** Սա բացակայում է հնագույն հունարեն P^{46}, ℵ, A կամ B ձեռագրերում, ինչպես նաև չկա Որոգինեսի, Ջերոմի կամ Օգոստինոսի գործածած հունարեն ձեռագրերում, սակայն այն առկա է Կողոսացիների զուգահեռ խոսքում (տես՝ Եփես. 1:4) և Փիլիմոն 1:5-ում: Ըստ երևույթին այստեղ՝ Եփեսացիներում այն հանդիսանում է դպրական հավելում: Նրանք հակված էին ստանդարտացնել Պողոսի արտահայտությունները:

❖ **«սուրբեր»** Տե՛ս Հատուկ Թեմա. Սուրբեր, Կող. 1:2-ում:

1:16 Այս համարը հայտնում է Պողոսի աղոթքի կյանքի երկու առանձնահատկություններ՝ (1) գոհունակությունը և (2) հարատևությունը: Պողոսը հարատևությամբ աղոթում էր Քրիստոսի բոլոր եկեղեցիների համար (տես՝ Հռոմ. 1:9, 2 Կորնթ. 11:28, Փիլ. 1:3-4, Կող. 1:3,9, 1 Թեսաղ. 1:2-3, 2 Տիմ. 1:3, Փիլիմոն 4):

Սա լավ աստվածաբանական բալանս է Աստծուն վստահելու և բարեխոսական աղոթքի միջև: Ավետարանի քարոզչությունը և եկեղեցիների աճը Աստծո կամքն էր: Չնայած դրան, Պողոսը զգում էր նրանց համար անդադար աղոթելու կարիքը: Ինչ-որ առումով հավատացյալների աղոթքները արձակում են Աստծո զորությունը թարմ և նոր նոր կերպերով: Ինքնիշխան Աստվածը ընտրել է սահմանափակել Իրեն Իր ժողովրդի աղոթքներով (տես՝ Հակ. 4:2): Բարեխոսական աղոթքը Աստծո զորության խորհուրդն է՝ կապված հավատացյալի գիտակից խնդրանքների հետ: Տե՛ս Հատուկ Թեմա գոհության վերաբերյալ, Կող. 4:2-ումԼ Տե՛ս Հատուկ Թեմա. Բարեխոսական Աղոթք, Կող. 4:3-ում:

1:17

NASB, NRSV, NJB	**«Տեր Հիսուս Քրիստոսը, փառքի Հայրը, ձեզ տա հոգին...»**
NKJV	**«Տեր Հիսուս Քրիստոսը, փառքի Հայրը, տա ձեզ այն հոգին»**
TEV	**«Տեր Հիսուս Քրիստոսը, փառավոր Հայրը, տա ձեզ Հոգին»**

Ուշադրություն դարձրե՛ք Երրորդության վրա եղած շեշտադրությունը TEV թարգմանության մեջ (1) Եփես. 1:3-14, (2) Եփես. 1:17, (3) Եփես. 2:18, (4) Եփես. 3:14-17 և (5) Եփես. 4:4-6: Տե՛ս Հատուկ Թեմա. Երրորդություն, Եփես. 1:3-ում:

❖ **«փառքի Հայրը»** Սա ՀԿ-յան տիտղոս է Աստծո համար (տես՝ Սաղմ. 24:7, 29:3, Գործք 7:2): Սեռական հոլովը (փառքի) նաև կիրառվում է Հիսուսի համար 1 Կորնթ. 2:8 և Հակ. 2:1-ում: Պողոսի աղոթքն է, որ ՅԱՀՎԵՆ այս նորահավատներին տա ամբողջական և կատարյալ հասկացողություն այն ճշմարիտ իմաստության, որ Հիսուս Քրիստոսն է, ոչ թե գնոստիկ սուտ վարդապետների մտավոր սուտ իմաստության: Գոյություն չունի մարդկային ծածուկ գիտություն: Հիսուսն է Աստծո իմաստությունը, որը կատարելապես հայտնում է Նրան: Տե՛ս ավելի ընդարձակ գրառում «Փառք» թեմայի շուրջ Եփես. 1:6-ում:

❖ **«ձեզ տա հոգի»** «Հոգի» տերմինը անարտրուսային է (կոնկրետ առարկա չէ), սակայն իրականում ծառայում է երկու նպատակով՝ վերաբերելով մարդկային հոգուն, որը լիցքավորված է Սուրբ Հոգով: Եսայի 11:2-ը նկարագրում է Աստծուց տրված Սուրբ Հոգու պարգևները որպես «իմաստության հոգի» և «հասկացողության հոգի», «խորհրդի հոգի» և «զորության հոգի», «գիտության հոգի» և «Աստծո վախի հոգի»»

ՆԿ-ում կան մի շարք համարներ, որոնք նկարագրում են, թե ինչ պտուղ է տալիս Սուրբ Հոգին հավատացյալների կյանքերում:

1. «սրբության հոգի», Հռոմ. 1:4
2. «որդեգրության հոգի», Հռոմ. 8:15
3. «հեզ հոգի», 1 Կորնթ. 4:13
4. «հավատքի հոգի», 2 Կորնթ. 4:13
5. «իմաստության և հայտնության հոգի», Եփես. 1:17
6. «ճշմարտության հոգի» ի հակադրություն «վախի հոգու», 1 Հովհ. 4:6:

❖ **«իմաստության և հայտնության հոգին . . . Իրեն ճանաչելու համար»** Այս պարբերության մեջ առկա դերանունները վերաբերում են Հայր Աստծուն, ինչպես և Եփես. 1:3-14-ում առկա հիմնական դերանունները: Իմաստությունն ու հայտնությունը միայն մի քանի հոգու համար չէին, այլ բոլոր հավատացյալների (տես՝ Եփես. 4:13): Սա գործածվում էր հերքելու սուտ վարդապետների մտավոր և բացառիկ շեշտադրությունները: Ավետարանի գիտությունը աստվածատուր է և Հիսուսին քարոզող (տես՝ Կող. 1:9): Նա է ճշմարտությունը (տես՝ Հովհ. 8:32, 14:6):

1:18-19 Քրիստոսում Հայր Աստծո մատակարարումն ունի երեք առանձնահատկություն՝

1. հավատացյալների նախասահմանված հույսը
2. հավատացյալների փառավոր ժառանգությունը
3. հավատացյալների կողմից Քրիստոսում դրսևորված Աստծո գերազանց զորությունը հասկանալը

1:18 «ձեր սրտի աչքերը լուսավորվելով» Սա մեղավոր՝ ընկած մարդկությանը ավետարանի բերած հասկացողության համար կիրառվող փոխաբերություն է (տես՝ Գործք 26:18, 2 Կորնթ. 4:4-6): Սա միշտ էլ եղել է Աստծո կամքը: Տես՝ <u>Հատուկ Թեմա. Սիրտ</u>, Կող. 2:2-ում:

❖ **«կոչման հույսը»** «Հույս» թեմայի շուրջ ամբողջական գրառման համար տե՛ս Հատուկ Թեմա Կող. 1:5-ում:

«Կոչում» (*kaleō*) տերմինը ՆԿ-ում կիրառվում է աստվածաբանական մի քանի նշանակությամբ՝

1. մեղավորները փրկության են կանչված Աստծո կողմից Քրիստոսի միջոցով
2. մեղավորները կանչում են Տիրոջ անունը փրկվելու համար
3. հավատացյալները կանչված են Քրիստոսի պես ապրելու
4. հավատացյալները կանչված են ծառայության գործերին

Այս տեքստի շեշտը դրված է #1 –ի վրա: «Կոչման» համար տե՛ս Հատուկ Թեմա Եփես. 4:1-ում:

❖ **«փառքի հարստությունը»** Պողոսը հաճախ է ավետարանի ճշմարտությունների վերաբերյալ խոսում որպես «հարստությունների» մասին (տես՝ Եփես. 1:7,18, 2:4,7, 3:8, 16): Տե՛ս Եփես. 1:7-ի գրառումը:

❖ **«ժառանգություն»** Տե՛ս ամբողջական գրառումը Եփես. 1:11-ում:

1:19

NASB	**«գերազանց մեծությունը»**
NKJV	**«չափազանց մեծ մեծությունը»**
NRSV	**«անչափելի մեծությունը»**
TEV	**«ինչքան շատ մեծ է»**
NJB	**«ինչքան զարմանալի մեծ է»**

ՆԿ-ում այս *huperballō* տերմինը միայն Պողոսն է գործածում: Այս տերմինն արտահայտում է նրա ճնշող հույզերն այն մասին, թե Քրիստոսով ինչ է արել Աստված ապստամբ մարդկությանը փրկելու համար (տես՝ 2 Կորնթ. 3:10, 9:14, Եփես. 1:19, 2:7, 3:19):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՊՈՂՈՍԻ *HUPER* ԲԱՂԱԴՐՅԱԼԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅՈՒՆԸ
SPECIAL TOPIC: PAUL'S USE OF *HUPER* COMPOUNDS

Պողոսը հատուկ սեր ուներ նոր բառեր հորինելու՝ ստեղծելու, գործածելով հունարեն *huper* ՆԱԽԴԻՐԸ, որը հիմնականում նշանակում է «չափազանց» կամ «վեր»: ՄԵՌԱԿԱՆ (ԲԱՑԱ-ՌԱԿԱՆ) հոլովի հետ օգտագործելիս նշանակում է «հանուն»: Նաև կարող է նշանակել «մասին» կամ «վերաբերյալ», ինչպես *peri* (տես՝ 2 Կորնթ. 8:23, 2 Թեսաղ. 2:18): ՀԱՅՑԱԿԱՆ հոլովի հետ կիրառելիս նշանակում է «վեր», «վրայով» կամ «ավելին» (տես՝ Ա. Տ. Ռոբերթսոնի *Հունարեն Նոր Կտակարանի քերականություն պատմական հետազոտությունների համաձայն*, էջ՝ 625-633 /A. T. Robertson, *A Grammar of the Greek New Testament in the Light of Historical Research*/): Երբ Պողոսը ուզում էր ահտուկ շեշտադրել ինչ-որ մի գաղափար, նա կիրառում էր այս ՆԱԽԴԻՐԸ բաղադրյալ տեսքով: Հաջորդիվ տրված է Պողոսի կողմից այս ՆԱԽԴԻՐԻ հատուկ բաղադրյալ տեսքով կիրառված բառերի ցանկը՝

Ա. *Hapax legomenon* (կիրառված է միայն մեկ անգամ, այն էլ ՆԿ-ում)
1. *Huperakmos,* կյանքի ծաղկուն շրջանն անցած, 1 Կորնթ. 7:36
2. *Huperauxanō*, չափազանց շատ ավելանալ, 2 Թեսաղ. 1:3
3. *Huperbainō*, չափն անցնել կամ մեղանչել, 1 Թեսաղ. 4:6
4. *Huperkeina*, ավելին, 2 Կորնթ. 10:16
5. *Huperekteina*, չափազանց երկարացնել, 2 Կորնթ. 10:14
6. *Huperentugchanō*, բարեխոսել, Հռոմ. 8:26
7. *Hupernikaō,* մեծապես հաղթանակած, Հռոմ. 8:37
8. *Huperpleonazō*, չափազանց շատ առատության մեջ լինել, 1 Տիմ. 1:14
9. *Huperupsoō*, գերագույնս մեծարել, Փիլ. 2:9
10. *Huperphroneō*, վեհ մտքեր ունենալ, Հռոմ. 12:3

Բ. Բառեր, որոնք գործածվել են միայն Պողոսի թղթերում՝
1. *Huperairomai,* մեկին մեծարել, 2 Կորնթ. 12:7, 2 Թեսաղ. 2:4
2. *Huperballontōs*, չափից ավելին, չափազանց, 2 Կորնթ. 11:23 (ՄԱԿԲԱՑ միայն այստեղ, սակայն որպես ԲԱՑ՝ 2 Կորնթ. 3:10, 9:14, Եփես. 1:19, 2:7, 3:19)
3. *Huperbolē*, գերազանցել, արտասովոր սպառազինել, Հռոմ. 7:13, 1 Կորնթ. 12:31; 2 Կորնթ. 1:8, 4:7,17, 12:7, Գաղ. 1:13
4. *Huperekperissou*, շատ ավելին, Եփես. 3:20, 1 Թեսաղ. 3:10, 5:13

5. *Huperlian*, ամենաբարձր աստիճանի կամ գերազանց, 2 Կորնթ. 11:5, 12:11
6. *Huperochē*, գերազանցություն, վեհափառություն, 1 Կորնթ. 2:1, 1 Տիմ. 2:2
7. *Huperperisseuō*, լինել գերառատ, Հռոմ. 5:20 (ՉԵՁՈՔ ՍԵՌ, առատապես լցված լինել, գերհագեցած, 2 Կորնթ. 7:4)

Գ. Բառեր, որոնք գործածվել եմ Պողոսի և հազվադեպ էլ ՆԿ-յան այլ հեղինակների կողմից՝

1. *Huperanō*, շատ բարձր, Եփես. 1:21, 4:10 և Եբր. 9:5
2. *Huperechō*, գերազանցություն, վեհափառություն, Հռոմ. 13:1, Փիլ. 2:3, 3:8, 4:7, 1 Պետ. 2:13
3. *Huperēphanos*, սնապարծ կամ ամբարտավան, Հռոմ. 1:30, 2 Տիմ. 3:2 և Ղուկ. 1:51, Հակ. 4:6, 1 Պետ. 5:5:

Պողոսը մեծ նախանձախնդրությամբ անձ էր. երբ ինչ-որ բաներ կամ անձիք լավն էին, նրանք շատ լավն էին, իսկ երբ վատն էին՝ նրանք շատ վատն էին: Այս ՆԱԽԴԻՐԸ թույլ է տալիս նրան արտահայտելու մեղքի, անձի, Քրիստոսի և Ավետարանի վերաբերյալ իր գերադրական զգացմունքները:

❖ **«մեր՝ հավատացյալներիս նկատմամբ»** Այս արտահայտությունը ցույց է տալիս «ունիվերսալիզմի» վարդապետության կեղծ լինելը, որը պնդում է, որ ի վերջո բոլոր մարդիկ են փրկվելու: Այս ունիվերսալիզմը սովորաբար հիմնված է լինում տեքստային ապացույցի վրա, որոնք եզակի հատվածներ են, ինչպես օրինակ Հռոմ. 5:18: Աստված ընտրել է թույլ տալ մարդկանց մասնակցություն ունենալու (պայմանական ուխտը) իրենց սեփական փրկության և պանդխտության մեջ: Քրիստոնյաները պետք է ապաշխարեն և հավատան (տես՝ Մարկ. 1:15, Գործք 3:16, 19, 20:21):

Ավետարանի ներառականությունը (տես՝ Հովհ. 1:12, 3:16, 1 Տիմ. 2:4-6, Տիտոս 2:11, 1 Պետ. 3:9) հակադրված էր սուտ վարդապետների բացառիկությանը: Ավետարանը տիեզերական՝ ունիվերսալ է իր հրավերով (տես՝ 1 Տիմ. 2:4, Տիտոս 2:11, 2 Պետ. 3:9) բոլոր այն մարդկանց, ովքեր կկանչեն Տիրոջ անունը (տես՝ Հռոմ. 10:9-13):

❖ **«Իր հզոր ուժի գործադրությամբ»** Հնարավոր է սա մեկ այլ ակնարկ է Եսայի 11:2 խոսքի (տես՝ Եփես. 1:17): Այս արտահայտությունը կազմված է երեք հունարեն բառերից (*energas, kratos* և *ischus*), որոնք մատնանշում են Աստծո զորությունը: Զորության համար կիրառվող չորրորդ տերմինը (*dunamis*) գործածվել է այս համարում ավելի շուտ: Փրկությունը կենտրոնանում է Քրիստոսով Աստծո զորավոր գործողությունների վրա, ոչ թե անհատ մարդկանց գործերի կամ մտավոր գաղափարների վրա:

1:20 Հաջորդ երեք արտահայտությունները նկարագրում են, թե ինչ է Հիսուսի համար արել Աստծո հզոր, փառավոր զորությունը՝

1. Այն «հարություն տվեց Նրան մեռելներից»՝ Եփես. 1:20: Սա նշան էր, որ Նա ընդունեց Նրա զոհը (տես՝ 1 Կորնթացիների 15):
2. Այն «նստեցրեց Նրան Իր աջ կողմում» ՝ Եփես. 1:20: Սա մեծության և գերազանցության վայրն է (տես՝ Կող. 3:1): Սա ցույց է տալիս, որ Քրիստոսը շարունակում է Իր բարեխոսական ծառայությունը (տես՝ Հռոմ. 8:34, Եբր. 7:25, 9:24, 1 Հովհ. 2:1 և ՀԿ-ի մարգարեության իրականացում էր. տես՝ Սաղմ. 110:1, Գործք 7:56):
3. Այն «Նրան դարձրեց եկեղեցու գերագույնը՝ Գլուխը»՝ Եփես. 1:22: Եկեղեցու համար կիրառվող այս տերմինը վերաբերում է Աստծո նոր յուրահատուկ ժողովրդին, որը ներառում է բոլոր նրանց, ովքեր հավատում են՝ հրեա և հեթանոս (տես՝ Եփես. 2:11-3:13, Գաղ. 3:27-29):

Այն բաները, որոնք Հայրն արել է Քրիստոսի համար, Քրիստոսը արել է Իր հետևորդների համար (տես՝ Եփես. 2:5-6): Բոլոր երեք տերմինները Եփես. 2:5-6-ում բաղադրյալ են *syn* նախդիրով, որը նշանակում է «մեկի հետ համագործակցող»:

❖ **«երկնային տեղերում»** Այս տեղի պարագա (ոլորտը) չեզոք հոգնակի ածականը (*epouranious*) կիրառվում է միայն Եփեսացիներում (տես՝ Եփես. 1:3, 20, 2:6, 3:10, 6:12): Այս տերմինի բոլոր կիրառությունների համատեքստից հասկանում ենք, որ այն պետք է որ նշանակի հոգևոր տիրույթ՝ իշխանություն, որտեղ հավատացյալները ապրում են այստեղ և հիմա, ոչ թե ապագա երկինքը:

1:21 «շատ ավելի բարձր, քան ամեն մի իշխանություն ու զորություն և կարողություն ու տերություն» Այս արտահայտությունը կարող է վերաբերել հոգևոր դասերի՝ աստիճանների կամ իշխանությունների կարգերի, որոնք մարդկության թշնամիներն են (տես՝ Եփես. 2:2, 3:10, 6:12, Կող. 1:16, 2:10,15, Հռոմ. 8:38-39, 1 Կորնթ. 15:24): Հիսուսը բոլոր հոգևոր աստիճաններից էլ գերազանց է՝ բարձր է (տես՝ Եբրայեցիների 1-2): Սա հերթում էր գնոստիկ սուտ վարդապետների կողմից հրեշտակային կարգերի (*աէոնների*) վրա դրած շեշտադրությունը՝ կարևորությունը: Այս կարգերը հնարավոր է նաև վերաբերում են մեր աշխարհում ոչ անձնավորված կառույցներին, որոնք թույլ են տալիս մարդկանց գործելու՝ ապրելու առանց Աստծո: Օրինակներն են՝ փիլիսոփայությունը, կրթությունը, կառավարությունը, բժշկությունը, կրոնը (տես՝ Հենդրիկ Բերխոֆի *Քրիստոսը և Իշխանությունները*, Հերալդ Հրատարակչության /Hendrik Berkhof's *Christ and the Powers*, Herald Press/):

Տե՛ս <u>Հատուկ Թեմա. Հրեշտակները Պողոսի Գրքերում</u>, Եփես. 6:12-ում:

«Շատ ավելի բարձր» խոսքի համար տես՝ <u>Հատուկ Թեմա. Պողոսի *Huper* բաղադրյալի կիրառությունը</u>, Եփես. 1:19-ում:

«Իշխանություն» տերմինի համար տե՛ս <u>Հատուկ Թեմա. *Arche*</u>, Կող. 1:16-ում:

❖ **«ամեն մի անունից վեր, որ անվանվում է»** Սա կարող է վերաբերել սուտ վարդապետների ծածկագրերին կամ անուններին, որոնք օգտագործվում էին հրեշտակային ոլորտների միջով անցնելու համար: Փրկության համար նրանք ապավինում էին իրենց ծածուկ գիտության մոգական անուններին: Պողոսը հաստատում է, որ փրկությունը կամ Աստծո հետ միությունը գտնվում է միայն Հիսուսի անվան մեջ (տես՝ Փիլ. 2:9-11): ՀԿ-ում մարդու անունը բնութագրում էր այդ անձի բնավորությունը: Հոր բնավորությունը կատարելապես հայտնված է Որդու մեջ (տես՝ Հովհ. 14:8-14, 17:11):

❖ **«ոչ միայն այս աշխարհում, այլ նաև՝ գալիք»** Հրեաները հավատում էին երկու դարաշրջանների՝ ներկայիս չար դարաշրջանը և նոր արդար դարաշրջանը, որը գալու էր Մեսիայի միջոցով: Հոգու այս նոր արդար դարաշրջանը մեկնարկեց Պենտեկոստեի օրը (տես՝ Հովել 2:28-32, Մատթ. 12:32, Մարկ. 10:30, Ղուկ. 16:8, 18:30, 20:34, 1 Տիմ. 6:17, 2 Տիմ. 4:10, Տիտոս 2:12, Եբր. 6:5):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՅՍ ԵՎ ԳԱԼԻՔ ԴԱՐԱՇՐՋԱՆՆԵՐԸ
SPECIAL TOPIC: THIS AGE AND THE AGE TO COME

ՀԿ-ի մարգարեները նայում էին ապագային որպես ներկայի երկարացված տևողություն: Նրանց համար ապագան կլինի այն ժամանակ, երբ աշխարհագրական Իսրայելը կվերականգնվի: Համենայն դեպս, նույնիսկ դա նրանք տեսնում էին որպես նոր օր (տես՝ Ես.65:17, 66:22): Աբրահամի սերունդների կողմից (անգամ գերությունից հետո էլ) Եհովայի շարունակ կամովի մերժված լինելը մի նոր հարացույց ձևավորեց հրեական միջկտակարանյան ապոկալիպտիկ գրականության մեջ (այսինքն՝ 1 Ենովք, 4 Եզրաս, 2 Բարուք): Այս գրքերը սկսեցին զատորոշել երկու դարաշրջանները՝ ներկայիս չար դարաշրջանը, որտեղ տիրում է Սատանան և գալիք արդարության դարաշրջանը, որտեղ տիրում է Հոգին և մուտքը կատարել է Մեսիան (հաճախ որպես ուժեղ պատերազմող):

Աստվածաբանության այս դարում (էսկատոլոգիայի) ակնհայտ զարգացումներ կան: Աստվածաբանները սա անվանում են «առաջադեմ՝ պրոգրեսիվ հայտնություն»: ՆԿ-ը հաստատում է այս երկու դարաշրջանների նոր տիեզերական իրականությունը (այսինքն՝ ժամանակավոր երկբայությունը /դուալիզմ/):

<u>Հիսուս</u>	<u>Պողոս</u>	<u>Եբրայեցիներ</u>

Մատթեոս 12:32	Հռոմեացիս 12:2	1:2
Մարկոս 10:30	1 Կորնթացիս 1:20; 2:6,8;	6:5
Ղուկաս 16:8	3:18	11:3
Ղուկաս 18:30	2 Կորնթացիս 4:4	
Ղուկաս 20:34-35	Գաղատացիս 1:4	
	Եփեսացիս 1:21; 2:2,7; 6:12	
	1 Տիմոթեոս 6:17	
	2 Տիմոթեոս 4:10	
	Տիտոս 2:12	

ՆԿ-ի աստվածաբանության մեջ այս երկու հրեական դարաշրջանները մասնակիորեն համընկնում են Մեսիայի երկու գալուստների անսպասելի և անտեսված կանխատեսումների պատճառով: Հիսուսի մարմնացումը իրականացրեց նոր դարաշրջանի հանդիսավոր բացման մասին ՀԿ-ի մարգարեությունների մեծ մասը (Դան.2:44-45): Սակայն, ՀԿ-ը Նրա գալուստը տեսնում էր նաև որպես Դատավոր և Հաղթող, մինչդեռ Նա առաջին անգամ եկավ որպես Չարչարվող Ծառա՝ (տես՝ Եսայի 53, Զաք.12:10), խոնարհ ու հեզ (տես՝ Զաք.9:9): Նա վերադառնալու է իշխանությամբ, այնպես ինչպես ՀԿ-ում է կանխատեսված (տես՝ Հայտնություն 19): Երկու փուլով այսպիսի իրականացումը պատճառ հանդիսացավ, որ Թագավորությունը լինի ներկայում (հանդիսավոր կերպով բացված), սակայն ապագայում (դեռևս ոչ լիակատար): Սա ՆԿ-ի «արդեն», բայց «դեռ ոչ»-ի լարվածությունն է:

1:22 «ամեն ինչ հնազանդեցրեց Նրա ոտքերի տակ» «Հնազանդությունը» ռազմական տերմին է հրամանների շղթայի համար (տես՝ Սաղմ.110:1, 8:6): Հայրը տվել է Որդուն առաջին տեղը ամեն ինչում (տես՝ Կող.1:18-19): Ի վերջո Որդին ամեն ինչ վերադարձնելու է Հորը (տես՝ 1 Կորնթ. 15:27-28):

Հիսուսի հնազանդությունը Հորը չի ենթադրում, որևէ առումով, անհավասարություն, այլ Երրորդության շրջանակում գործի կազմակերպչական, ֆունկցիոնալ բաժանում: Տե՛ս ավելի ծավալուն գրառում «հնազանդության» թեմայի շուրջ Եփես.5:21-ում:

❖ **«Նրան տվեց ամեն ինչի վրա Գլուխ լինել»** Այս փոխաբերությունը Հիսուսը որպես Իր մարմնի՝ եկեղեցու Գլուխը, գտնվում է միայն այստեղ՝ Եփեսացիներում և Կողոսացիներում (տես՝ Եփես.4:15, 5:23, Կողոսացիների 1:18-19, 2:19): Հնագույն Միջերկրականի ժողովուրդները հավատում էին, որ գլուխն է մարմնին կյանք տվողը:

❖ **«եկեղեցի»** Աշխարհիկ հունարենում այս տերմինը նշանակում էր ժողովք (տես՝ Գործք 19:32): *Ekklesia* բառը գործածվում էր Սեպտուագինտայում (LXX), որպեսզի թարգմանվի եբրայերեն «Իսրայելի ժողովք» (*qahal*) տերմինը (տես՝ Ելից 16:3, 12:6, Ղևտ.4:13, Թվոց 20:4): Սա Եփեսացիներում այս տերմինի մի քանի կիրառություններից առաջինն է (տես՝ Եփես.1:22, 3:10,21, 5:23, 24, 25, 27, 29, 32): Թե՛ Եփեսացիներում (1:22-23) և թե՛ Կողոսացիներում (1:24) Պողոսը եկեղեցին կոչում է Քրիստոսի մարմինը: Վաղ եկեղեցին իրեն դիտարկում էր որպես Աստծո կատարյալ ժողովուրդը՝ Հիսուս Քրիստոսի՝ Մեսիայի հետ, որպես իրենց Գլուխը:

Եփեսացիների և Կողոսացիների միջև գրական անսովոր կապերից մեկն այն է, որ Եփեսացիներում այս տերմինը վերաբերում է տիեզերական եկեղեցուն (տես՝ 1 Կորնթ.10:32, 12:28, 15:9, Գաղ.1:13, Փիլ.3:6), մինչդեռ Կողոսացիներում սովորաբար այն վերաբերում է տեղական եկեղեցուն: Սա մատնացույց է անում այն փաստը, որ Եփեսացիներին ուղղված նամակը շրջանառվող էր:

Տե՛ս Հատուկ Թեմա Կող.1:18-ում:

NASB, NKJV, NRSV	**«Նրա լիությունը, Ով լցնում է ամենն ամենի մեջ»**
TEV	**«Նրա կատարելությունը, Ով Ինքն է կատարում ամեն բան ամեն տեղ» (ծանոթագրություն՝ «...Ով Ինքն է կատարելապես լցված Աստծո լիությամբ»)**
NJB	**«Նրա լիությունը, Ով լցված է, ամենն ամենի մեջ»**

Քերականորեն սա ներկա ժամանակի չեզոք սեռի դերբայ է: Ահա մի քանի հավանական մեկնություններ այս արտահայտության շուրջ՝

1. Քրիստոսը լցնում է եկեղեցին
2. եկեղեցին լցնում է Քրիստոսին (տես՝ Կող. 1:24)
3. եկեղեցին լցվում է հավատացյալների լիակատար թվով՝ քանակով (թվաբանական առանձնահատկությունը, տես՝ Հռոմ. 11:25):

Այս տերմինաբանությամբ նա դիտավորյալ կերպով հարձակվում էր առաջին գնոստիկ սուտ վարդապետների *աէոնների, հրեշտակների կարգերի կամ աստիճանների* սուտ աստվածաբանական համակարգի վրա: «Լիություն» և «լցված» տերմինները հունարեն *plērōma* տերմինի ձևերն են, որոնք հետագայում՝ երկրորդ դարում դարձան գնոստիկ տեխնիկական տերմին հրեշտակների մակարդակների ամբողջ թվի՝ քանակի համար (տես՝ Եփես. 1:21), բարձրյալ, սուրբ, հոգևոր աստծո և ավելի ցածր աստծո միջև, որը ստեղծեց չար մատերիան: Տե՛ս Գնոստիցիզմի վերաբերյալ գրառումները Եփեսացիների Ներածության մեջ:

Սա եկեղեցու հզոր սահմանում է: Նրա նպատակն է կատարելապես արտացոլել իր գլխին՝ Հիսուսին: Ինչպես Հիսուսը հայտնեց Հորը, այնպես էլ եկեղեցին պետք է հայտնի Հորը:

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

Սա ուղղեցույց հանդիսացող սերտողության մեկնաբանություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնաբանության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսով: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին եք մեկնաբանության մեջ առաջին տեղում: Դուք չպետք է այն զիջեք մեկնաբանին:

Քննարկման այս հարցերը կազմվել են ձեզ օգնելու, որպեսզի մտածեք գրքի այս բաժնի գլխավոր հարցերի շուրջ: Դրանք մտածելու տեղիք տվող հարցեր են և վերջնական չեն:

1. Ո՞վ է փառաբանվում Եփես. 1:3-14-ում:
2. Սահմանե՛ք «գնոստիցիզմը»:
3. Ինչպե՞ս է ընտրությունը (տես՝ Եփ. 1:4,5,11) կապված մարդու պատասխանի հետ (Եփ. 1:13):
4. Թվարկե՛ք, թե ինչեր են տեղի ունեցել նախքան արարումը (Եփես. 1:4, Մատթ. 25:34, Հովհ. 17:24, 1 Պետ. 1:20, Հայտն. 13:8):
5. Արդյո՞ք մենք ենք Աստծո ժառանգությունը, թե՞ Նա՝ մերը (Եփես. 1:11):
6. Ո՞ւմ է վերաբերում պարբերաբար կրկնվող այս արտահայտությունը՝ «Նրա փառքի գովությանը»:
7. Ի՞նչ առնչություն ունի Եփես. 1:20-ը Եփես. 2:5-6-ի հետ:
8. Ո՞ւմ մասին խոսվում Եփես. 1:21-ում (հրեշտակներ, դևեր, մեղսալի աշխարհի կառույցները):
9. Նկարագրե՛ք հրեական երկու դարաշրջանները: